Ազգ
Azg
11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 151(5234)
ISSN: 1829-1651

# «Մաքսային միությունը Հայաստանին տալիս է տնտեսական անվտանգություն, խոշոր ներդրումներ եւ զբաղվածության աճ»

## *Ինտեգրման գործընթացների ուսումնասիրության խմբի ղեկավար Աշոտ Թավադյանը ներկայացնում է մանրամասներ*

***Հայաստանի՝ Մաքսային միության մեջ ընդգրկվելու որոշումը տարատեսակ գնահատականների տեղիք տվեց, որոնք հիմնականում քաղաքական էին կամ քաղաքականացված: Տնտեսական առումով ի՞նչ նշանակություն կարող է ունենալ մեր միանալը Մաքսային միությանը եւ ի՞նչ նշանակություն՝ ԵՄ հետ ասոցիացման պայմանագիրը: Այս հարցերի շուրջն է մեր բացառիկ հարցազրույցը վերոնշյալ գործընթացներից ամենատեղեկացված անձնավորության՝ Եվրասիական բանկի առաջարկով Մաքսային միության եւ ԵՄ հետ Հայաստանի ինտեգրացիոն գործընթացները գնահատող խմբի ղեկավար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Թավադյանի հետ:***



**- Մաքսային միությանը միանալու մասին Հայաստանի հայտարարությունը հիմնականում դիտարկվում է ավելի շուտ որպես քաղաքական քայլ: Կարո՞ղ եք ասել, ի՞նչ տնտեսական հիմքեր ունի այն:**

- Մոտ 4 ամիս առաջ Եվրասիական բանկի առաջարկով սկսեցինք հաշվարկել՝ ե՛ւ Մաքսային միության միանալու, ե՛ւ Եվրոմիության հետ ասոցիացման պայմանագրի զուտ տնտեսական օգուտը եւ տնտեսական անվտանգության խնդիրը: Աշխատանքները ավարտվել են օգոստոսի 18-ին, գնահատականները ուղարկվել են Եվրասիական բանկ եւ այնտեղ հավանության արժանացել: Առաջին համեմատությունն այն էր, որ Մաքսային միությանը միանալու դեպքում, տնտեսության ներկա կացության պայմաններում, կարճաժամկետ հեռանկարում մենք կունենանք հավելյալ 4 տոկոս համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճ, իսկ Եվրոմիության հետ ասոցիացման պայմանագրի դեպքում՝ 2,3 տոկոս աճ:

Հստակեցնեմ, թե ինչ ասել է 4 տոկոս հավելյալ տնտեսական աճ: Եթե մենք կնքում ենք պայմանագիր Մաքսային միությանը միանալու մասին, այն սկսում է գործել, եւ դրա շնորհիվ տնտեսության մեջ առանց հավելյալ քայլերի, ներկա վիճակը պահպանելով, 2 տարի հետո տարեկան ունենում ենք լրացուցիչ 4 տոկոս տնտեսական աճ:

*Տես էջ 3*

# Սիրիայի քիմիական զենքի վերահսկումը կվերացնի նոր պատերազմի վտանգը

## *Օբամայի կհետաձգի հարվածը, Մոսկվան կներկայացնի վերահսկման ծրագիր*




**Սիրիայի քիմիական զենքի նկատմամբ միջազգային վերահսկողություն հաստատելու Մոսկվայի առաջարկությունը ԱՄՆ-ին թույլ կտա խուսափել Մերձավոր Արեւելքում եւս մեկ վտանգավոր հակամարտություն սկսելու պատասխանատվությունից: Սեպտեմբերի 10-ին այս տեսակետն է արտահայտել ՄԱԿ-ում Ռուսաստանի մշտական ներկայացուցիչ Վիտալի Չուրկինը:**

**Արեւմուտքը Մոսկվայի նախաձեռնությանն արձագանքեց զուսպ, բայց դրական կերպով: ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման դա համարեց առաջին քայլը հակամարտության դադարեցման ճանապարհին: Այդուհանդերձ Սպիտակ տանը դեռ վերջնականապես չեն բացառում ուժային տարբերակը:**

*Տես էջ 5*

# Պուտինի այցը Հայաստան չի՞ կայանա

**Սեպտեմբերի երկրորդ կեսին սպասվում էր Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի այցը Հայաստան: Կրեմլին մոտ կանգնած մի աղբյուր, սակայն, հայտնում է, որ այդ այցը չի կայանա: Բուն պատճառը այդ աղբյուրը չգիտեր, սակայն պատճառների վերաբերյալ ենթադրություններ անում էր: Ըստ այդ ենթադրություններից մեկի՝ պատճառ կարող է լինել, որ Պուտինը Հայաստանից ստացել է այն, ինչ ուզում էր, ու ինչն առավել վաղօրոք ակնկալել է ստանալ Հայաստան այցի ընթացքում: Իրեն հայտնի պատճառներով միայն Պուտինն արագացրել է գործընթացները եւ ստանալիքը ստացել է Սերժ Սարգսյանի՝ ՌԴ այցելության ընթացքում: Այնպես որ Պուտինի Հայաստան այցելության անհրաժեշտությունը վերացել է: Ենթադրություններից մյուսով՝ Պուտինը առավել զգայուն է իր դեմ դժգոհությունների նկատմամբ եւ չի ուզում ականատես լինել Հայաստանում առկա հակառուսական տրամադրությունների արտահայտություններին, որոնք նրա այցի օրերին կարող են հասկանալի դրսեւորվել:**

**Ս. Խ.**

# Մարսելահայերը բողոքել են

Թղթակից **Ժան Էսքիյանը** Փարիզից տեղեկացնում է, որ Ֆրանսիայում գործող «Հայկական կազմակերպությունների համակարգող ծակցության խորհուրդը» (ՀԿՀԽ) հաղորդագրություն է հրապարակել, որով իր բողոքի ձայնն է բարձրացրել ընդդեմ օգոստոսի 30-ին




Մարսելի «Օլիմպիկ» ֆուտբոլի հեղինակավոր ակումբի եւ թուրքական ազգային ավիաընկերության միջեւ կնքված գործակցության համաձայնագրի: «Մենք չենք հասկանում նման գործակցությունը: Հարգում եւ սիրում ենք Մարսելի «Օլիմպիկը», բայց դավաճանություն ենք համարում նման քայլը: Հարյուրամյակի շեմին դա անարգանք է ցեղասպանության մեր զոհերի եւ մեր՝ վերապրողներիս ինքնասիրության նկատմամբ», ասված է հայտարարության մեջ:

Էսքիյանը նաեւ գրում է, որ ֆրանսիական ֆուտբոլային ակումբի բազմաթիվ երկրպագուներ որոշել են բոյկոտել 2013-14 թվի խաղերը:

Հիշեցնենք, որ «Թըրքիշ էրլայնզը» Ստամբուլ-Մարսել ուղիղ թռիչքներ է իրականացնում հունիսի 4-ից:

**Հ. Ծ.**

# Ռուբեն Սեւակը «վերադարձավ» հայրենիք

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Էջմիածին-Երեւան**

Կառույցը, որտեղ երեկվանից գործում է Ռուբեն Սեւակի անվան թանգարանը, Մայր աթոռի պատմական կառույցներից է եւ 18-րդ դարից գործել է որպես սեղանատուն, մառան կամ ամբարանոց: Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանի եւ արխիվի տնօրեն **Ասողիկ քահանա Կարապետյանի** ներկայացմամբ՝ կաթողիկոսի որոշմամբ սեղանատունը վերածվեց թանգարանի:

Հայ մեծանուն բանաստեղծ Ռուբեն Սեւակի եղբոր որդին՝ բարերար Հովհաննես Չիլինգիրյանը, տարիներ առաջ ցանկություն է հայտնել Մայր աթոռին նվիրաբերել Ռուբեն Սեւակի գրքերը, նամակները, անձնական իրերն ու ածխանկարները: Բարերարի ցանկությամբ եւ նվիրատվությամբ թանգարանում կցուցադրվեն նաեւ նրա անձնական հավաքածուից 200 կտավ՝ Էդգար Շահին, Գառզու, Հովհաննես Այվազովսկի եւ այլն:



«Այսօր մենք հրաշքի ենք ականատես լինում, որովհետեւ այս սուրբ հողի վրա վերակենդանացավ ու անմահացավ 1915թ. Մեծ եղեռնի նահատակ, մեծանուն բանաստեղծ Ռուբեն Սեւակի հիշատակը», ասաց **Հովհաննես Չիլինգիրյանը**՝ ներկաներին փոխանցելով Ռուբեն Սեւակի դստեր՝ Շամիրամ Սեւակի ողջույններն ու երախտագիտությունը:

«Այս թանգարանի հիմնումը հարգանքի տուրք եւ խոնարհում է ինչպես Ռուբեն Սեւակին, այնպես եւ Գրիգոր Զոհրապին, Սիամանթոյին, Վարուժանին, Կոմիտասին եւ մեր մյուս մեծերին, մեկ եւ կես միլիոն մեր անմեղ զոհերին, ովքեր չուրացան իրենց հավատքն ու հայրենիքը եւ ընդունեցին նահատակության պսակը: Նրանք նահատակվեցին՝ իրենց սրտում վառ պահելով տեսիլքը, որ ապրելու եւ հարատեւելու է հայ ժողովուրդը», թանգարանի բացման արարողությանը հայրապետական օրհնանքից հետո ասաց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ը՝ հավելելով, որը՝ թանգարանը նվիրվում է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի ոգեկոչմանը եւ ունի առանձնահատուկ նշանակություն:

*Տես էջ 6*

# Հայաստանը երկու բանակի է բաժանվել

Երեկվա խորհրդարանական օրը եւ Մաքսային միությանը Հայաստանի հնարավոր անդամակցության շուրջը հակոտնյա տրամադրություններով էր լի: Դա սկսվեց առավոտյան արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի եւ խորհրդարանականների հանդիպումով, եւ դրանից հետո երկուստեք արտահայտած կարծիքներով, ապա եւ իր ապոգեյին հասավ Ազգային ժողովի հայտարարությունների ժամին: Ասենք, որ եւ խորհրդարանում, եւ նրանից դուրս՝ հանրության ակտիվ հատվածում ոչ ոք առանց էմոցիայի չի խոսում այս թեմայով, բոլորն օգտագործում են թեման երկրին իրենց նվիրվածությունը ցույց տալու համար, միաժամանակ ողջ խորքով եւ լայնությամբ սպիտակի կամ սեւի մեջ ընկղմելով հարցը: Հատուկենտ տեսակետներ կան առ այն, թե պետք է վերջապես նստել եւ տնտեսագիտորեն հաշվել՝ ի՞նչ է տալու Հայաստանին Մաքսային կամ Եվրասիական միությունը, ի՞նչ՝ Ասոցիացման պայմանագրով նախատեսված տնտեսական համագործակցությունը, ո՞ր ճանապարհն ընտրել, կամ երկուսը միաժամանակ ինչպես շարունակել: Մեր խորհրդարանականները բացառություն չեն՝ սեպտեմբերերեքյան հայտարարությունը ամբողջապես ոչնչացնելու կամ ամբողջապես գովաբանելու առումով: Այսինքն՝ մերոնց պակասում է պրագմատիզմը, ինչը հարկավոր է պետական այրերին գոնե ճակատագրական որոշումներ կայացնելիս:

Վերադառնալով երեկվա խորհրդարան՝ նշենք, որ Նալբանդյան-խորհրդարանականներ երեկվա փակ հանդիպումից կոալիցիոն ուժերի պատգամավորները գոհ էին (անգամ ԱԺ փոխխոսնակ **Էդուարդ Շարմազանովի** համար այնտեղ նոր բան է եղել), իսկ արտակոալիցիոն ուժերի ներկայացուցիչները՝ խիստ դժգոհ: Վերջիններս նշում էին, որ այդ հանդիպումը ոչինչ չի ավելացրել իրենց տիրապետած տեղեկատվությանը, որ ունեին մինչեւ հանդիպումը: Ի դեպ՝ Է. Նալբանդյանը, պատասխանելով Ասոցիացման համաձայնագրի՝ Վիլնյուսում Հայաստանի ստորագրել-չստորագրելու լրագրողական հարցին, անորոշ պատասխան էր տվել, թե՝ «հանձնակատար Ֆյուլեի հետ հանդիպումից հետո հրապարակված հաղորդագրության մեջ ընդգծվեց Հայաստանի կողմից արտահայտված ցանկությունը՝ հնարավոր բոլոր ձեւաչափերով եւ ուղղություններով շարունակել զարգացնել հնարավորինս սերտ եւ խորը համագործակցությունը Եվրոմիության հետ, շարունակել առաջ տանել մեր հարաբերությունները այն բոլոր դրականի, ձեռքբերումների հիման վրա, որոնք արձանագրվել են վերջին տարիներին Հայաստանի եւ Եվրոմիության միջեւ, որքանով որ դա հնարավոր կլինի Եվրոմիության կողմից եւ որը չի հակասի Հայաստանի որոշմանը մասնակցել, անդամակցել Մաքսային միությանը»:

Սա լրագրողական տարընթերցումների տեղիք էր տվել:

Մի քանի թարմ շեշտադրում փոխանցելով թեմայի խորհրդարանական ինտերպրետացիաներից՝ նշենք, որ «Ժառանգությունից» **Թեւան Պողոսյանն** անցած տասնամյակի բարեփոխումների ջանքերն ափսոսաց, նշելով, թե սեպտեմբերի 3-ից հետո փոխվում ենք դեպի հետ. ոստիկանությունն է հին մեթոդներին անցնում, շուտով մամուլը եւս այսպես բաց չի մնա: ՀԱԿ-ից **Արամ Մանուկյանը** հասավ նրան, որ ներկա նախագահի պաշտոնավարումը վտանգում է Հայաստանի ապագան: «Իշխանությունների նման քայլը, միգուցե պարտադրված, բայց վտանգում եւ հարցականի տակ է դնում Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը», մտորում էր ազատդեմոկրատական **Խաչատուր Քոքոբելյանը**՝ համոզված, որ Մաքսային միություն մուտք գործելով Հայաստանի Հանրապետությունը կորցնում է անկախության այնպիսի կարեւորագույն ատրիբուտներ, ինչպիսիք են անկախ արտաքին քաղաքականություն եւ ինքնուրույն ֆինանսատնտեսական գործառույթ իրականացնելու հնարավորությունը: Մանավանդ՝ այդ քայլը հակասահմանադրական է: **Ռուբեն Հակոբյանը** («Ժառանգություն») առաջարկում էր՝ հայտ ներկայացնելով միջազգային հանրությանը ճանաչելու Ղարաբաղի անկախությունը եւ այն համարելու միջազգային սուբյեկտ: Նրա ասածից կարելի էր ենթադրել, որ համագործակցությունը պետք է կառուցել այն ուղղությամբ, որը պատրաստակամություն կհայտնի ճանաչման վերաբերյալ:




Իսկ ահա ԱԺ փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովը սեպտեմբերի 3-ի հանդիպումը արդյունավետ որակեց դաշնակից երկու պետությունների համար էլ՝ երկրի անվտանգության ապահովման, տնտեսության եւ էներգետիկայի արդիականացման եւ դիվերսիֆիկացիայի տեսակետից՝ հիշեցնելով նաեւ Եվրոպայի հետ քաղաքական երկխոսությունը շարունակելու Հայաստանի պատրաստակամության մասին: Նրա համար անհասկանալի էր, որ «Մաքսային միությանն անդամակցելու մասին հայտարարությունը, չգիտես ինչու, ոմանց համար դարձավ ամպրոպ անամպ երկնքում», մինչդեռ Հայաստանն իր գնալիք՝ անկախ պետականության ուղին ընտրել է 1991 թվականի սեպտեմբերի 21-ին, զուգահեռ Ռուսաստանի, եվրոպական երկրների եւ այլ գործընկերների հետ համագործակցելով: Առհասարակ ԱԺ հայտարարությունների ժամին ՀՀԿ-ն հակադարձեց ընդդիմախոսներին. **Հայկ Բաբուխանյանը** ողջունեց նախագահի քաղաքականությունը՝ Մաքսային միություն եւ հետագայում էլ Եվրասիական միություն մտնելու վերաբերյալ, եվրասիական հարթակը մեզ համար ավելի հասկանալի անվանելով եւ դա զարգացման խթան նկատելով տարբեր ոլորտների համար: Ու բոլորովին էլ նախագահի Սարգսյանի հայտարարությունը անսպասելի չհամարեց՝ մի շարք պայմանագրեր ու նախադրյալներ նկարագրելով դրա համար: **Կարեն Ավագյանը** զարմացավ՝ ժամանակին ԱՊՀ կամ ՀԱՊԿ մտնելիս ինչո՞ւ այդպիսի աղմուկ չէին բարձրացնում ընդդիմախոսները, անվտանգության հարցերով համագործակցելն անկախության կորուստ չէ, իսկ տնտեսական համագործակցությունը կորո՞ւստ է: Իսկ **Արտակ Զաքարյանը** ԱԺ նախագահին շնորհակալություն հայտնեց արտգործնախարարի հետ հանդիպում կազմակերպելու համար, նշելով, որ արտառոց ոչինչ չի տեղի ունեցել, Հայաստանը հակասությունները բացառող քաղաքականություն է վարելու այսուհետ էլ, որքանով որ դա հնարավոր է: Դա (Մաքսային միությանն անդամակցելը) չի սահմանափակում եվրոպական եւ այլ գործընկերների հանդեպ հանձնառությունները:

**Մարգարիս Եսայանը** նկատողություն արեց քաղաքական ընդդիմախոսներին՝ «թատրոնը պահեք ավելի անլուրջ առիթների համար, ռեալպոլիտիկը լրիվ այլ բան է»:

Մի խոսքով՝ այս հակասական մոտեցումը մեր կարծիքով առկա է նաեւ հասարակության մեջ, նախագահ Սարգսյանի սեպտեմբերի 3-ի հայտարարությունը Մոսկվայում մեր հասարակությունը եւս բաժանել է հակոտնյա ճամբարների, որոնց հարկավոր է բացատրել Հայաստանի այս կամ այն դիրքորոշման օգտակարությունն ու շահավետությունը, նաեւ բյուրեղացնելով անկախության գաղափարը: Իսկ անսպասելի շրջադարձերը դրան չեն նպաստում:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ

## Անդրադարձել են աղետի գոտու ընդհատված բնակարանաշինության խնդրին

**Վերջին շրջանում Գյումրու հասարակական շրջանակներում եւ լրատվամիջոցներում ոչ մեկ անգամ ահազանգ հնչեցվեց, որ այստեղ եւ մարզի այլ համայնքներում դեռ երկրաշարժից անօթեւան մնացող ընտանիքների համար այս տարվա խոստացված պետական աջակցությամբ բնակարանաշինությունն այդպես էլ չի մեկնարկում, իսկ Ախուրյանում նույնիսկ չի շարունակվում անցյալ տարի սկսված շինարարությունը: Նման խնդիրները պարբերաբար արծարծել է մասնավորապես «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպությունը, որի կողմից հանրապետության իշխանություններին օրերս հղված բաց նամակում նաեւ նշվել են անցյալ տարի Գյումրու «Մուշ 2/2» թաղամասի որոշ թվով շենքերի գազաֆիկացման հարցում առկա եւ առանձին այլ խնդիրներ:**

**Երեկ «Շիրակ կենտրոնը» տեղեկացրել է, որ հաղորդագրություն է ստացել ՀՀ քաղաքաշինության նախարարությունից: «Աղետի գոտում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում, Շիրակի եւ Լոռու մարզերում «Գլենդել հիլզ» ընկերության կողմից կատարվող շինարարական աշխատանքների ընթացքի հետ կապված խնդիրները քննարկելու նպատակով,- ասվում է բերված հաղորդագրությունում,- ՀՀ քաղաքաշինության նախարար Սամվել Թադեւոսյանի ղեկավարությամբ կայացավ խորհրդակցություն»:**

**Խորհրդակցության ընթացքում համայնք առ համայնք ներկայացվել են շինարարության տարբեր փուլերում գտնվող, արդեն կառուցված եւ առաջիկայում կառուցվելիք բնակարանների ու բնակելի տների շինարարության ընթացքին առնչվող խնդիրները: Կառուցապատող «Գլենդել հիլզ» ընկերության նախագահ Էդուարդ Մելիքյանը տեղեկացրել է, թե Գյումրիում նախատեսվող շինարարության դանդաղեցումը պայմանավորված է լրացուցիչ բնակարանների կառուցման վերանախագծման խնդրով:**

**Խորհրդակցության ժամանակ անդրադարձ է եղել Գյումրու հիշյալ թաղամասի բնակարաններում գազի կաթսաների խնդրին, տեղեկացվել է, որ դրանց տեղադրման համար ձեռնարկվել են լրացուցիչ ապահովության միջոցներ: Նախարար Ս. Թադեւոսյանը, հաշվի առնելով տարածաշրջանի բնակլիմայական պայմանները, խստորեն զգուշացրել է կաթսաների տեղադրման եւ շինարարական աշխատանքների արագացման առնչությամբ:**

**Միաժամանակ, ինչպես նշվում է նախարարության հաղորդման մեջ, նախարարը շեշտել է, որ շինարարության հետագա ընթացքին հետեւելու եւ շինաշխատանքների հետ կապված խնդիրները տեղում դիտարկելու նպատակով այս շաբաթվանից սկսած, իր գլխավորած աշխատանքային խումբը պարբերաբար այցելություններ է կատարելու այն համայնքներ, որտեղ այս ծրագրի շրջանակներում «Գլենդել հիլզ» ընկերությունը աշխատանքներ է կատարում:**

**Քաղաքաշինության նախարարությունից «Շիրակ կենտրոնին» նաեւ տեղեկացրել են, որ այսօր օրվա երկրորդ կեսին նախարարը շրջայց կկատարի Գյումրի եւ Ախուրյան, այս հասարակական կազմակերպության ներկայացուցիչը եւս հրավիրված է մասնակցելու շրջայցին:**

**Գ. Մ.**

## Կաշառակեր գնդապետ

**Սեպտեմբերի 10-ին, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության եւ պաշտպանության նախարարության վերահսկիչ-վերստուգիչ վարչության համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, կաշառք ստանալու պահին ձերբակալվել է ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության պետի տեղակալ գնդապետ Դավիթ Դավթյանը:**

**Վերջինս զինվորական ծառայության ընթացքում մահացած զինծառայողի սոցիալապես անապահով վիճակում գտնվող ընտանիքին օրենքով սահմանված կարգով անհատույց դրամական աջակցության տրամադրումն իբր արագացնելու դիմաց զինվորի ծնողից պահանջել եւ ստացել է 1000 ԱՄՆ դոլար:**

**Փաստի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը կատարում է ՀՀ ԱԱԾ Քննչական վարչությունը:**

ՀՀ ԱԱԾ Մամուլի կենտրոն

## Բարեգործական միջոցառում Բուենոս Այրեսում

**Սեպտեմբերի 8-ին Արգենտինայում ՀՀ դեսպանության հովանավորությամբ եւ կազմակերպմամբ Բուենոս Այրեսի Հայ կենտրոնի «Սիրանույշ» սրահում տեղի ունեցավ «Հայաստանի օր» բարեգործական միջոցառումը, որին մասնակցեցին արգենտինահայ համայնքային կազմակերպություններն ու միությունները:**

**Միջոցառման ընթացքում ավելի քան հազար այցելուներին ներկայացվեցին Հայաստանի եւ Արցախի տեսարժան վայրերի լուսանկարները, հայկական ավանդական կերակրատեսակները, ձեռագործ հուշանվերներ: Ելույթներով հանդես եկան արգենտինահայ համայնքի երգի եւ պարի համույթները, ինչպես նաեւ անհատ երաժիշտ-կատարողներ:**

**Հիշյալ միջոցառման ընթացքում գոյացած ողջ հասույթը կտրամադրվի Երեւանի «Զատիկ» եւ «Մարի Իզմիրլյան» մանկատների վերանորոգման աշխատանքներին:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

# Անցուդարձ

# «Մաքսային միությունը Հայաստանին տալիս է տնտեսական անվտանգություն, խոշոր ներդրումներ եւ զբաղվածության աճ»

*1-ին էջից*

Իհարկե, հաշվի առնելով մեր առաջարկությունները, որոնք, ի դեպ, հնչեցին Ռուսաստանի եւ Հայաստանի նախագահների միասնական հայտարարության ժամանակ:

**- Մաքսային միությանը միանալու մասին Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների համատեղ հայտարարությունը նաեւ մեկնաբանվում է որպես անսպասելի քայլ: Դա իրո՞ք այդպես էր:**

- Այդ հայտարարությունը սպասելի էր ոչ միայն այն բանի համար, որ արդեն էին հաշվարկներ, այլեւ որ մենք ունենք պայմանագիր ԱՊՀ երկրների միջեւ ազատ տնտեսական գոտու մասին, ստորագրված Հայաստանի վարչապետի կողմից 2011-ի հոկտեմբերի 18-ին: Բացի Հայաստանից՝ այն ստորագրել են նաեւ Ռուսաստանը, Բելառուսը, Ուկրաինան, Ղազախստանը եւ Մոլդովան: Հետագայում այդ պայմանագիրը 2012-ի սեպտեմբերի 11-ին վավերացվել է Ազգային ժողովի կողմից՝ 97 կողմ, 2 դեմ, 7 ձեռնպահ ձայներով: Մաքսային միությունը այս փաստաթղթի տրամաբանական շարունակությունն է: Եվրոմիության հետ ասոցիացման պայմանագրի բանակցությունների ժամանակ դա անշուշտ հաշվի պետք է առնվեր: Բնական է, որ եթե մի միության մեջ ես, մեկ այլ միության հետ բանակցությունների ժամանակ կարող են առաջանալ հակասություններ:

**- Պրն Թավադյան, հիմնական հարցերից մեկն էլ այն է, որ մենք ինչպե՞ս կարող ենք միանալ Մաքսային միությանը, եթե նրա մյուս անդամների հետ չունենք ընդհանուր սահմաններ:**

- Մենք ընդգծել ենք, որ այդ միության մեջ մեր գործընկերները դա պետք է հաշվի առնեն եւ փոխհատուցեն: Այսինքն, սահմանների բացակայության ժամանակ դրա հետ կապված հավելյալ ծախսերի փոխհատուցում, օրինակ՝ էներգակիրներ (գազ, դիզվառելիք, միջուկային վառելիք) մեր երկիր ներմուծելիս:

**- Ի՞նչ հիմնական տնտեսական գործոններով են տարբերվում Մաքսային միությանը միանալը եւ Եվրոմիության հետ ասոցիացման համաձայնագիրը:**

- Դրանք լրիվ տարբեր բնույթի համաձայնագրեր են: Մաքսային միությանը միանալը նշանակում է երեք առանցքային առավելություններ՝ տնտեսական անվտանգություն, ուղղակի ներդրումներ եւ զբաղվածության աճ: Տնտեսական անվտանգության պայմանագիրը նշանակում է, որ ներքին եւ արտաքին գների տարբերությունը հասցվելու է նվազագույնի: Այսինքն, առաջին փուլում գազի գինը կիջնի մոտ 30 տոկոսով մաքսավճարի դուրս գալու շնորհիվ եւ միայն գազի գնի մեջ նույն երկարաժամկետ, ասենք 5 տարվա ընթացքում կունենանք 750 մլն դոլարի (տարեկան 150 մլն դոլար) օգուտ: 30 տոկոսով կնվազի նաեւ Ռուսաստանից ներկրվող նավթամթերքների գինը: Մոտ 500 մլն դոլար կներդրվի Իրան-Հայաստանի երկաթուղու կառուցման համար, քանի որ դա ռազմավարական նշանակություն ունեցող նախագիծ է: 100 մլն դոլար հյուսիս-հարավ ճանապարհի համար Եվրասիական բանկի կողմից: Ներդրումներ են նախատեսվում նաեւ նավթամթերքների տեղափոխման, ատոմակայանի գործունեության եւ նոր ատոմակայանի կառուցման, «Նաիրիտի» վերազինման ու գործարկման համար: Եվս մեկ հանգամանք՝ մեր կազմակերպությունները մուտք կունենան Մաքսային միության մեջ մտնող երկրների պետական պատվերների շուկա: Պարզ է, որ, ասենք, նոր ատոմակայանի կամ Իրանի հետ երկաթուղու կառուցման աջակցություն Եվրոմիությունից չի լինելու:

Սրանք համեմատենք Եվրոմիության հետ ասոցիացման պայմանագրով երկարաժամկետ առումով նախատեսվող 2,3 տոկոս տնտեսական աճի հետ, որը գումարային առումով նշանակում է մոտ 150 մլն դոլարի ավելացում: Ընդ որում, դա իրենց կողմից համարվել է ռիսկային:

Հայկական սփյուռքի գործոնը: Ռուսաստանում 2,2 մլն հայ է ապրում, Եվրոմիության երկրներում՝ 900 հազար: Ռուսաստանում ապրող հայերից 800 հազարը գրանցված են միգրացիոն ծառայություններում, որոնց համար նման պայմանագրերի կնքումը բերում է այնտեղ աշխատողների վիճակի բարելավմանը՝ վարչական, աշխատանքի ընդունվելու եւ մնացած բոլոր առումներով: Դա նաեւ պետք է բերի դրամական փոխանցումների տարեկան 3 տոկոս աճին, ինչն էլ իր հերթին կնպաստի ՀՆԱ-ի աճի տեմպի ավելացմանը: Այսպիսով, ըստ մեր հաշվարկների, եթե ներդրումների ամբողջ փաթեթը իրագործվի, ապա դա կտա եւս 4 տոկոս հավելաճ: Դա նշանակում է, որ մաքսային պայմանագիրը կյանքի կոչելուց 2 տարի հետո, մեր ՀՆԱ-ում կունենանք միջին տարեկան 400 մլն դոլարի լրացուցիչ աճ:

**- Որքանո՞վ է իրատեսական, որ Ձեր վկայակոչած խոշոր ներդրումները կիրականանան:**

- Դա նշվում է երկու երկրների նախագահների հայտարարության մեջ, որն արդեն է հենց այս ծրագրերի իրագործումը նկատի ունենալով:

**- ԵՄ հետ ասոցիացման պայմանագիրն, այնուամենայնիվ, մշակվել է, եւ արդյո՞ք այդքան լուրջ խոչընդոտներ կան, որոնք թույլ չեն տալիս նաեւ այս համակարգում Հայաստանի ընդգրկվելը:**

- Նախ ես կցանկանայի ներկայացնել այն ռիսկերը, որոնք կարող են վտանգել ԵՄ հետ մեր ասոցիացմանը, որոնք նշել են հենց այդ պայմանագրի փորձագետները եւ որոնց մասին չի բարձրաձայնվում: Առաջինը՝ Թուրքիայի հետ փակ սահմանն է: Երկրորդը կոռուպցիան է, որն, իհարկե, ներքին խնդիր է: Երրորդ վտանգը մեր երկրի տնտեսության չափազանց մեծ կախվածությունն է հումքի արտահանումից: Չորրորդ վտանգը «ուղեղների» արտահոսքն է: Ես կավելացնեի եւս մեկը՝ ապրանքների, ծառայությունների եւ կապիտալի ազատ տեղաշարժ՝ առանց մարդկանց ազատ տեղաշարժի, որը չի ենթադրվում այդ պայմանագրում: Ակնհայտ է, որ առանց մարդկանց ազատ տեղաշարժի չի կարող լիարժեքորեն իրագործվել այլ գործոնների ազատ տեղաշարժը:

Ինչ վերաբերում է ԵՄ հետ մեր ասոցիացմանը, ապա ես համոզված կարող եմ ասել, որ Մաքսային միության հետ պայմանագիրը, որի արդյունքում մենք կունենանք ավելի կայուն եւ անվտանգ տնտեսություն, հնարավորություն կտա հետագայում ավելի բարենպաստ պայմաններով կնքելու ասոցիացման պայմանագիր ԵՄ հետ: Ներկայումս մենք կարող ենք ԵՄ-ի հետ պայմանագրեր կնքել առանձին ոլորտների վերաբերյալ: Օրինակ՝ մարդկանց ազատ տեղաշարժի կամ գունավոր մետաղների խտանյութի վաճառքի հետ կապված մաքսային խնդիրների առնչությամբ: Նմանատիպ պայմանագրեր Եվրոմիությունն ունի ԵՄ անդամ չհանդիսացող տարբեր երկրների հետ:

**- Մեր հարեւանների՝ Վրաստանի եւ Իրանի հետ մաքսային խնդիրներ կունենա՞նք Մաքսային միության մեջ մտնելու դեպքում:**

- Մենք Վրաստանի հետ Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամ ենք եւ որեւէ խնդիր չեմ տեսնում: Վրաստանն ինչո՞ւ պետք է դժվարություններ ստեղծի, այն դեպքում, երբ Հայաստանի, նաեւ Պարսկաստանի շուկան իրենց համար շահավետ է, առավել եւս անհամեմատ մեծ՝ Ռուսաստանի եւ ԱՊՀ շուկան: Իրանի դեպքում նույնպես որեւէ բարդություն չեմ տեսնում:

**- Հնարավո՞ր է, որ հետագայում Մաքսային միությունում միասնական դրամական միավոր լինի ազգային արժույթների փոխարեն:**

- Նման բան նախատեսված չէ: Սա զուտ տնտեսական միություն է, ներդրումների եւ տնտեսական անվտանգության համաձայնագիր:

Հարցազրույցը՝
ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

*ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ*

# Հնչակյանների համագումարը Երեւանում

«Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում երեկ մեկնարկեց Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության համագումարը, որին մասնակցում էին 13 մասնաճյուղերի ներկայացուցիչներ: Մի քանի օր շարունակ հնչակյանները Ծաղկաձորում կքննարկեն ինչպես հայաստանյան, այնպես էլ




սփյուռքահայությանը վերաբերող խնդիրները: Բացի քննարկումներից՝ համաժողովի ընթացքում կուսակցության ղեկավար կազմը՝ կենտրոնական վարչությունը կորոշվի:

ՍԴՀԿ ատենապետ **Սեդրակ Աճեմյանի** խոսքերով՝ կուսակցության հայաստանյան կառույցում բազմաթիվ խնդիրներ են եղել: Մասնավորապես 2009-ին հնչակյանները դժվար փուլ մտան: «Խնդիրն այն էր, որ մենք ժամանակին չտեսանք եւ չկարողացանք չեզոքացնել վտանգը: Դա էր պատճառը, որ հայաստանյան կառույցում եղան ցնցումներ, որոնք ազդեցին նաեւ կուսակցության աշխատանքի վրա: Սակայն դրանով հանդերձ, կուսակցությունն իր դիրքորոշումը ներկայացրեց հայթուրքական արձանագրությունների, նաեւ հայաստանյան խնդիրների վերաբերյալ: Այժմ իմաստավորվելու ժամանակն է, եկել է ժամանակը ոտքի կանգնելու եւ շարունակելու աշխատել, որպեսզի մեր պետությունը բռնի ժողովրդավարության ուղին: Հետեւաբար՝ ի գործ», ասաց Սեդրակ Աճեմյանը:

Հնչակյանների համագումարին ողջույնի խոսք էր հղել վարչապետ **Տիգրան Սարգսյանը**, կուսակցության աշխատանքին գնահատանքի խոսքեր ուղղեց սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը**: Համագումարին ներկա էին նաեւ ավանդական մյուս երկու կուսակցությունների, նաեւ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հ. Հ.

# 4 տարի պայմանական եւ 1200 դոլար տուգանք՝ Չախալյանի եղբորը

Սեպտեմբերի 10-ին Ախալքալաքի շրջանային դատարանում կայացել է ջավախահայ ակտիվիստ Վահագն Չախալյանի եղբայր Արմեն Չախալյանի հերթական դատավարությունը, որի ընթացքում դատարանը որոշում է կայացրել հենց դատարանի դահլիճից ազատ արձակել մեղադրյալին:

Դատարանը, ըստ «Հարավային դարպաս» կայքէջի Ախալքալաքից տրված հաղորդման, որոշում է կայացրել ազատ արձակել Արմեն Չախալյանին՝ 4 տարի պայմանական եւ 2000 լարի (մոտ 1250 ԱՄՆ դոլար) տուգանք սահմանելով:

«Ազգը» տեղեկացրել է, որ 2013թ. հունիսի 28-ին Նինոծմինդայի շրջանի Գոնդուրա գյուղում տեղի ունեցած միջադեպի ժամանակ հատուկջոկատայինների կողմից ձերբակալվել էր ջավախահայ քաղաքական գործիչ, նախկին քաղբանտարկյալ Վահագն Չախալյանի եղբայր Արմեն Չախալյանը: Վերջինս ձերբակալվել էր երիտասարդների մեջ վիճաբանության վայր հատուկ կանչվելուց հետո, երբ դեռեւս որեւէ գործողություն չէր հասցրել նույնիսկ ձեռնարկել: Հունիսի 30-ին մեղադրանք էր առաջադրվել Վրաստանի քրեական օրենսգրքի 239-րդ (խուլիգանություն), 2-րդ (իշխանության ներկայացուցչի դեմ) եւ 3-րդ (սառը զենքի օգտագործում) կետերի համաձայն:

Սեպտեմբերի 5-ին էլ Ախալքալաքում ձեւավորված Արմեն Չախալյանի պաշտպանության կոմիտեն հանդես էր եկել հայտարարությամբ՝ պահանջելով «անհապաղ ազատ արձակել Արմեն Չախալյանին»:

Արմեն Չախալյանի գործով դատավարությունը մեկնարկել էր օգոստոսի 9-ին: Օգոստոսի 20-ի, օգոստոսի 27-ի եւ սեպտեմբերի 3-ի դատական նիստերն ըստ էության չէին կայացել դատախազության միջնորդությամբ: Դատավարության անհարկի ձգձգումների պատճառով Արմեն Չախալյանի առողջությունը զգալիորեն վատթարացել էր:

«Զուտ այն հանգամանքը, որ հունիսի 28-ի միջադեպի շուրջ 200 մասնակիցներից եւ ներկաներից այսօր կալանքի տակ է միայն Արմեն Չախալյանը, վկայում է, որ մենք գործ ունենք ակնհայտ քաղաքական ենթատեքստ պարունակող քրեախային գործողության հետ», ասվում էր հայտարարությամբ, եզրակացնելով, որ Արմեն Չախալյանի գործը շինծու է, իսկ նրա դատավարության շուրջը ընթացող զարգացումները՝ բացահայտ անօրինական:

Վ. Պ.

# Անհատապաշտության պատմական գինը

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Ինչո՞ւ ենք մենք` հայերս ձգտում ապրել մեր հայրենիքից հեռու, օտար երկրներում, մեր պապենական երկրի կարոտով համակված:

Մենք հազվադեպ ենք այս հարցն ուղղում ինքներս մեզ, եւ ուղղելու դեպքում էլ միշտ գտնում ենք պատճառաբանություններ, որոնք մեզ հետ առնչություն չունեն: Կամ մեր հարեւաններին ենք մեղադրում, կամ մեզ նվաճողներին անիծում, կամ էլ մեր թշնամիներին կշտամբում:

Ճիշտ է, պատմությունը բարեհաճ չի եղել մեր հանդեպ: Շատ դաժան է վերաբերվել մեզ` մի շարք պատճառներով, որոնց թվարկման ժամանակ երբեք մեր մտքով չի անցնում գնահատել մեր անձնական պատասխանատվությունը` ուրվագծելու գործում մեր ճակատագիրը որպես աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկի: Եթե մի օր մենք որոշենք խորասուզվել եւ քննարկել մեր պատասխանատվությունը, հավանաբար ի վիճակի կլինենք ավելի սթափ ձեւով ծրագրել մեր ապագան:

Պատճառը, թե ինչու հայերս չենք կարողացել դառնալ գերիշխող պետություն (բացի, անշուշտ, Տիգրան Մեծի իշխանության ժամանակ` մ.թ.ա. 1-ին դարում) մեր անհատապաշտությունն է: Անհատապաշտություն նշանակում է ինքնավստահություն, ինքնասահմանում, ազատություն, անկախություն եւ մի շարք այլ դրական հատկանիշներ, որոնք կոլեկտիվ հասկացությանը հակադրվելիս աղետալի են դառնում:

Զանազան զրկանքների, անարդարությունների, ոտնձգությունների եւ երկար ժամանակ օտար տիրապետության տակ գտնվելու հետեւանքով հայերս ձեռք ենք բերել չափազանց ուժեղ անհատապաշտական գծեր, որոնք միշտ էլ խոչընդոտել են հավաքական, կոլեկտիվ կարգապահություն եւ պետականություն հաստատելուն եւ մեկ ընդհանուր ապագայի շուրջը կենտրոնանալուն: Այդպես ենք մենք դիմակայել պատմության բոլոր անբարենպաստ պայմանները:

Ստրկատիրական հասարակարգում անհատապաշտությունը ճնշված էր հատկապես հոգեւորականների կողմից, եւ հայացքներն ու հույսերը ուղղված էին դեպի երկինք, վեհը, անանձնականը: Հոգեւոր առաջնորդները այդ հանգամանքը օգտագործում էին` ամրապնդելու իրենց դիրքերը: Զարմանալի չէ, որ թագավորներն ու իշխանավորները աստվածային ծագում ունենալու պատրանքն էին ստեղծում, որպեսզի օրինականացնեին իրենց իշխանությունը զանգվածների վրա: Իշխանավորներն ու հոգեւորականները չարաշահում էին իրենց դիրքը` լռեցնելու անհատական գաղափարի ամեն մի արտահայտություն: Հավատաքննության (ինկվիզիցիայի) ժամանակաշրջանում Եվրոպայում խստորեն պատժում էին ամեն մի շեղում եկեղեցական վարդապետությունից: Մարդիկ զրկված էին անկախ մտածելուց: Նման անհանդուրժողականության ճանաչված զոհեր դարձան Գալիլեյը եւ Ջորդանո Բրունոն:

Վերածննդի հայտնվելով հասարակության ուշադրությունը թեքվեց դեպի անհատը: Իսկ ավելի ուշ արդյունաբերական հեղափոխության ազդեցության տակ անհատն իր ձեռքը վերցրեց իր ճակատագիրը եւ սկսեց անարգել վայելել կյանքի բարօրությունները:

Եվրոպան աստիճանաբար սկսեց կարգավորել անհատապաշտության եւ հասարակական կամքի, կարգուկանոնի դրսեւորման երեւույթները, զարգացնելով որոշակի կառույցներ, որոնք վերահսկողություն կսահմանեին դրանց վրա: Մինչ անհատները սկսեցին համաձայնության եզրեր որոնել իրենց ազատությունների արտահայտման եւ ազգային ներդաշնակության միջեւ, ստեղծվեցին ուժեղ կառավարություններ, որոնք չսահմանափակեցին անհատական ազատությունները: Ազգայնականությունը եկավ միավորելու անհատներին: Ֆրանսիացի փիլիսոփա-լուսավորիչ Վոլտերը դարձավ անհատական ազատությունները հասարակական կարգուկանոնի պահպանման շրջանակներում տեղավորելու պաշտպանը: Նա այդ հասկացությունը շատ հակիրճ բնութագրեց. «Քո ազատությունն այնտեղ է վերջանում, որտեղ սկսվում է իմ քիթը»:

Մենք հպարտանում ենք, որ վերածնունդը Հայաստան մուտք գործեց Եվրոպայից առաջ: Գրիգոր Նարեկացու խոհերն այդ զարգացումներում առանձնակի նշանակություն ունեն: Նրա աղերսանքներն առ Աստված հիմնված են անհատի թուլությունների վրա: Նա մեղքերի աստվածային թողություն է խնդրում: «Մատյան ողբերգության» պոեմում իր աղոթքների միջոցով նա ուրվագծում է մարդկային թաքուն ցանկությունները ու հոգու արարքները պոետական այնպիսի բարձրարվեստ արտահայտչամիջոցներով, որոնք անգերազանցելի են մնում ցարդ:

Անհատապաշտության ձեւավորումը Հայաստանում պետք է դիտել օտար տիրապետության տակ գտնվելու կոնտեքստում, երբ անհատի գոյությունը գրեթե միշտ հարցականի տակ էր դրված: Ամեն մի հայ իր մեջ զարգացնում էր անհատապաշտությունը մեկ ուրիշ հայի հաշվին, միշտ մոռացության մատնելով համընդհանուր, համազգային շահերը պաշտպանելու գաղափարը: Հակադրությունը զգալի է հատկապես օսմանյան իշխանության տարիներին: Մինչ հայերի մեծամասնությունը տառապում էր տարբեր նահանգներում եւ շրջաններում, արտոնյալ դասին պատկանող մի խումբ հայեր եւ ամիրաներ Կոստանդնուպոլսում եւ այլ մեծ քաղաքներում ապրում էին շռայլության մեջ: Նրանք ծառայում էին սուլթանին, որը երբեմն նրանց միջոցով էր հարկերը հավաքել տալիս խեղճուկրակ հայ գյուղացիներից, որոնք չվճարելու դեպքում մտրակի հարվածների էին արժանանում ի գոհություն Մեծ Դռան: Հայ ամիրաների այդ դասը բոլորովին կապ չուներ երկրի խորքերում ապրող հայ զանգվածների հետ: Այսօր այդ ամիրաներին Ստամբուլում դեռեւս հիշում են, որովհետեւ երբեմն կարողանում էին սուլթանից թույլտվություն ստանալ եկեղեցի կամ դպրոց կառուցելու համար:

Անհատապաշտությունը հայերի մեջ երբեմն տարանջատված խմբավորման, ֆրակցիայի ձեւ է նաեւ ստացել: Հայտնի է, որ հայրենասիրության չափազանց պրիմիտիվ հասկացություն դրսեւորելով` ռուսական զորքում ծառայող հայ կամավորներ հրաժարվել են կռվել զորավար Անդրանիկի հրամանատարության ներքո Առաջին համաշխարհայինի վերջում, երբ ռուսական զորքը տուն էր վերադառնում` անպաշտպան թողնելով Կարսի ամրոցը: Ռազմամթերքը, սնունդն ու հանդերձանքը լցված էին եւ ենթակա օգտագործման, բայց հայ կամավորները հրաժարվել են պաշտպանել ամրոցը` պատճառաբանելով, թե Կարսը իրենց հայրենիքի մաս չի կազմում: Ի տես դրան` մեր ազգային հերոսը հուսահատ հեռացել է ճակատային գծից:

Պատերազմից հետո Աթաթուրքը կարողացավ պարտված երկիրը ոտքի կանգնեցնել շնորհիվ իր երկերեսանի քաղաքականության, մինչդեռ հայերս կորցրեցինք մեր առաջին հանրապետությունը, որը ձեռք էինք բերել վեցդարյա օտար տիրապետությունից հետո: Ճիշտ է, Հայաստանի ճակատագիրը գուցե կանխավճռված էր, քանի որ Աթաթուրքն ու Լենինը փորձում էին գերազանցել մեկը մյուսին, բայց, անկասկած, մեր մշտական տարաձայնությունները, ներքին անհամաձայնությունները իրենց ներդրումն ունեցան առաջին հանրապետության տապալման գործում: Փետրվարյան ապստամբության հետեւանքով տասնյակհազարավոր հայեր սպանեցին մեկը մյուսին` ավելացնելով թիվը ցեղասպանությունից մեր զոհվածների:

Խորհրդային ժամանակաշրջանը մարդկության պատմության ամենասեւ գլուխները գրեց: Կարծես կաթոլիկական ինկվիզիցիան էր վերադարձել վրեժ լուծելու, այս անգամ, սակայն, աթեիստական միտումներով: Արեւմտյան Հայաստանի մեր մտավորականների եւ ղեկավար անձնավորությունների կորստին գումարվեցին ստալինյան բռնակալությանը զոհ գնացած արեւելահայ տաղանդավոր գրողների սպանությունները, աքսորն ու հետապնդումները:

Խորհրդային Միությունը հսկայական բանտ էր, որտեղ ինքնությունն ու անհատապաշտությունը իրենց տեղը զիջել էին կոլեկտիվիզմին: Նոր գաղափարախոսությունը նպատակ ուներ ստեղծելու նոր մարդուն` խորհրդային քաղաքացուն:

Բայց հակառակ տարբեր բնույթի անբարենպաստ պայմանների եւ բռնությունների, խորհրդային վարչակարգը հայերիս համար եղավ օրհնաբեր, ավելորդ անգամ ապացուցելով, որ չկա չարիք առանց բարիքի: Երկրից դուրս գալու սահմանափակումները նպաստեցին, որ ժողովրդագրական տվյալները աճ արձանագրեն Հայաստանում: Դրան գումարվեց նաեւ Բալկաններից եւ Մերձավոր Արեւելքից կազմակերպված ներգաղթը: Երկրում ստեղծված կայունությունը իր հերթին նպաստեց, որ հսկայական վերելք ապրեն գիտությունը, գրականությունն ու երաժշտությունը` բացելով մի նոր ոսկեդար հայոց պատմության մեջ:

Ափսոս, սակայն, որ այդ ստիպողական կապվածությունը մեր երկրին ու հողին չկարողացավ հետագայում հայերին պահել իրենց հայրենիքում: Այսօր այն ամենը, ինչ ստեղծվել էր խորհրդային տարիներին, քանդված է, եւ հայերն արագ տեմպերով եւ կամովին լքում են իրենց հայրենիքը:

Ազերիները կազմ ու պատրաստ սպասում են սահմանի այն կողմում: Նրանք արդեն հորինել են մի պատմություն, առասպել, թե հայերը իբր ապրում են ազերի հողակտորի վրա: Եթե այս անգամ մենք կորցնենք մեծ դժվարությամբ ձեռք բերած երկրորդ (երրորդ) հանրապետությունը, ապա դա լինելու է այն պատմական գինը, որ մենք վճարելու ենք մեր անհատապաշտության դիմաց:

Դետրոյթ, ԱՄՆ

Թարգմ. Հ.Ծ.

# Թուրք ժողովրդի ողբերգությունը

***Հատված Կոստանդնուպոլսի ռուսական կայսերական դեսպանության նախկին առաջին կարգի թարգման, Միջազգային իրավունքի ինստիտուտի թղթակից անդամ Ա. Ն. Մանդելշտամի «Երիտթուրքական կայսրությունը» (1915 թ.- Մոսկվա) պատմաքաղաքական աշխատությունից, որը հրատարակել է Հովիկ Հովեյանը:***

Թուրք ժողովրդի ողբերգությունն այն է, որ ձեւավորման առաջին իսկ օրվանից միջազգային ասպարեզում ոչինչ չձեռնարկեց մշակույթի առումով արդարացնելու իր գոյությունը: Այդ երկրի ներխուժումը այլ ժողովուրդների կյանք իրականացվել է արյան եւ արցունքի գնով: Այն իր հետ բերում էր այլադավանների եւ այլազգիների ստրկացում, կնոջ, մտքի ստրկացում, ստրկություն եւ միայն ստրկություն: Իշխելով հնագույն մշակութակիր ազգերի` հույների, արաբների, հայերի եւ կենսական ուժով լեցուն սլավոնական ազգերի վրա, զավթելով հմայիչ մայրաքաղաքը (Կոստանդնուպոլիս), որը արժանի էր դառնալու համաշխարհային մայրաքաղաք, թուրք ժողովուրդը մատնվեց անգործության:

Ամեն կողմից երկիրը պատվել էր մուսուլմանական սխոլաստիկայի սարդոստայնով: Մարդկային ոգու ասպարեզում այս ազգը չցուցաբերեց ստեղծագործության որեւէ կենդանի նշույլ: Ընդունելով իր համար բացառապես օտար ցեղերի կրոնը` թուրքը չկարողացավ ստեղծել ազգային մահմեդական եկեղեցի:


А. Н. Мандельштамъ
МЛАДОТУРЕЦКАЯ ДЕРЖАВА.

Աղքատ թուրքերենը հրաժարվում էր ծառայել աբստրակտ մտածողությանը, իսկ արաբական լեզվաբանության օվկիանոսից վերցրել, քաշել էր վերացական հասկացությունների համարյա ողջ պաշարը: Յուրացնելով արաբական մտքի ողջ պերճանքը, զարդարելով իրեն թանկարժեք քարերով, որը առեւանգված էր պարսկական պոեզիայի գանձարանից, թուրք ազգը, բայց եւ այնպես, չկարողացավ ստեղծել ոչ մի մեծագույն եւ նորագույն գաղափար:

Աշխարհը նրանից ոչ մի նոր մեղեդի կամ երգ չլսեց, նոր ձեւեր եւ պատկերներ չտեսավ:

Թուրք ազգը չի տվել այնպիսի բանաստեղծի, գեղանկարչի կամ քանդակագործի, երաժշտի ու գիտնականի նոր անուն, որը սիրով եւ հիացմունքով կկրկներ մարդկությունը: Թուրքը ազգ-սնածաղիկ է: Նրա պատմական առաքելությունը ոչնչացնելն է, իսկ խորտակելու համար հոգի չի պահանջվում: Բայց հոգին պետք է, պահանջվում է կյանքի ազգային հիմքերի ստեղծման համար, ինչը առկա չէ Թուրքիայում: Երիտթուրքերը ապարդյուն փորձում էին հոգի ներդնել ազգի մեջ: Սակայն իրենք էլ դարձան այդ մեռած մարմնի մեռած պտուղը:

# Նոր դիվանագիտական սկանդալ Ադրբեջանի եւ Իրանի միջեւ

Ադրբեջանի Գյանջա քաղաքում պարսիկ բանաստեղծ Նիզամիի գերեզմանի վրա պարսկերեն գրությունները ադրբեջաներենով փոխարինելու վերաբերյալ Ադրբեջանի իշխանությունների որոշման հետ կապված՝ Իրանի ԱԳՆ մամուլի քարտուղար Մարզիյա Աֆխամը մեկնաբանել է, որ եթե խոսքը վերաբերում է Նիզամիի բանաստեղծությունների պարսկերենից թարգմանությանը, ապա իրանական կողմը նման քայլերը բարձր է գնահատում:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ Իրանի արտաքին գերատեսչության ներկայացուցիչը հայտարարել է. «Այլ մտադրությունների դեպքում՝ նման թարգմանությունները սադրիչ նպատակների են ծառայում եւ անհանդուրժողականության նշան են, այսինքն՝ դա հակասում է Նիզամի Գյանջեւիի մշակութային ժառանգությանը»: Նա հույս է հայտնել, որ Ադրբեջանը ուշադրություն եւ հարգանք կդրսեւորի իրանական մշակույթի նկատմամբ:

Գյանջայում Նիզամիի դամբարանի վրա պարսկերենով բանաստեղծությունների հախճապակիները ադրբեջաներեն գրությամբ նման հախճապակիներով փոխարինելու Ադրբեջանի իշխանությունների ցանկությունը մեծ միջազգային արձագանքի է արժանացել:

Ադրբեջանը Նիզամի Գյանջեւիին համարում է ադրբեջանական բանաստեղծ, սակայն, Բաքվի այդ պնդումներին ի պատասխան, Իրանը նշում է, որ պարսկալեզու բանաստեղծ Նիզամի Գյանջեւին ծնվել է ժամանակին Իրանի մաս կազմող քաղաքում: ԻՀԻ մշակութային ժառանգության կազմակերպության նախագահ Մոհամեդ Ջավադ Ադաբին ԻՌՆԱ պաշտոնական լրատվական գործակալությանը տված հարցազրույցում նշել էր, որ պարսկական գրականության դասական, Իրանի խոշոր բանաստեղծներից Նիզամի Գյանջեւիի հետ կապված կեղծարարությունները խոսում են Ադրբեջանի մշակույթի խղճուկության մասին:

Ավելի վաղ ԻՌՆԱ գործակալությանը տված հարցազրույցում Իրանի մշակույթի եւ իսլամական կողմնորոշման փոխնախարար Բահման Դարին հայտարարել էր, որ Ադրբեջանի հանրապետությունը յուրացնում է Իրանի մշակութային արժեքները:

«Առկա փաստերը վկայում են, որ Նիզամի Գայնջեւին իրանական բանաստեղծ է, եւ դա ապացուցելու անհրաժեշտություն չկա: Բայց ուրիշների մշակութային արժեքներն իրեն վերագրելը արժանապատիվ արարք չէ: Մշակութային արժեքներ չունենալով՝ Ադրբեջանն ստիպված իրեն է վերագրում այլ երկրների արժեքները: Ադրբեջանի նման քայլը, մշակութային գողությունից բացի, այլ բան չի կարելի անվանել», - ասել էր նա: Բահման Դարին հավելել էր, որ Իրանի մշակութային ժառանգության նկատմամբ նման ոտնձգությունն անպատասխան չի մնա:

Ադրբեջանցի գիտնական, պրոֆեսոր Սիրիուս Աշեմովը թեմայի հետ կապված ասել է. «Պատմական փաստերը ներկայացնելիս մենք պետք է քաջություն ունենանք ասելու, որ Արան եւ Շիրվան տարածքները, որտեղ 1918թ.-ին ստեղծվել է Ադրբեջան անունով պետությունը, Իրանի մաս են կազմել, հետեւաբար, այն ժամանակ, երբ Նիզամի Գյանջեւին գրում էր «Համսե» պոեմը, Գյանջայի շրջանը եւ Նիզամին իրանական են եղել: Ադրբեջանն ընդամենը 20-ամյա պատմություն ունի, հետեւաբար՝ 800 տարի առաջ ստեղծագործած բանաստեղծը չի կարող ադրբեջանցի համարվել»:

ՍՆՆԴԱԿԱՐԳ

# Մրգահյութերն այնքան էլ անվնաս չեն



Հարավային Կարոլինայի համալսարանի գիտնականները լրջորեն մտահոգված են թվացյալ «առողջ ըմպելիքների» լայն տարածումից: Վերջին հետազոտությունների համաձայն, մրգահյութերի եւ կոկտեյլների օգտագործումը կարող է առողջությանը վնասել դրանցում շաքարի մեծ քանակության պատճառով, գրում է բրիտանական «Գարդիան» թերթը:

Ավելի վաղ մրգահյութերը համարվում էին ճարպակալման հանգեցնող գազավորված ըմպելիքների առողջ համարժեքը:

ԱՄՆ-ում 2005-2009 թթ. անցկացված հետազոտության ընթացքում պարզվել է, որ բնական հյութերի մեծ մասին ավելացվում է քաղցրացուցիչ: Սննդագետներ Բարրի Պոպկինի եւ Ջորջ Բրեյի կարծիքով (Հարավային Կարոլինայի համալսարան, ԱՄՆ), գազավորված քաղցր ըմպելիքից հրաժարվողները հաշվի չեն առնում, թե որքան վնասակար կարող են լինել նաեւ բնական հյութերը:

British Medical Association-ի գիտական հանդեսում հրապարակված հետազոտության արդյունքների համաձայն, մրգահյութ օգտագործողները ավելի մեծ հավանականությամբ կարող են հիվանդանալ ճարպակալման հետ կապված երկրորդ տիպի շաքարախտով, քան թարմ պտուղ ուտողները:

Մասնագետները որպես օգտակար այլընտրանք առաջարկում են անցնել բանջարեղենի հյութերին:

**Պ. Ք.**

# Սիրիայի քիմիական զենքի վերահսկումը կվերացնի նոր պատերազմի վտանգը

*1-ին էջից*

Սպառնալիքներից եւ հարվածելու բարձրագոչ հայտարարություններից հետո ԱՄՆ-ը կարծես թե վերադառնում է Սիրիայի հետ կապված դիվանագիտական միջոցներին: Ամերիկյան հեռուստաալիքներին տված հարցազրույցում Օբաման խոստովանեց, որ Սիրիային հարվածելու իր ծրագիրը Կոնգրեսում այդպես էլ պաշտպանություն չգտավ: Իսկ Սիրիայի քիմիական զենքի նկատմամբ միջազգային վերահսկողություն հաստատելու Մոսկվայի առաջարկությունը Օբաման անվանեց «ճեղքում» հակամարտության դադարեցման ճանապարհին: Օբամայի խոսքերով, ԱՄՆ-ը «հաստատ» կհետաձգի հարվածը, եթե Բաշար Ասադը քիմիական զենքը հանձնի համաշխարհային ընկերակցության վերահսկողությանը:

«Իմ գլխավոր նպատակն է Սիրիայում այլեւս թույլ չտալ քիմիական զենքի կիրառություն: Եթե ի հայտ է եկել դիվանագիտական լուծման եղանակ, ապա դա նախընտրելի է», ասել է Օբաման:

Ամեն ինչ սկսվեց պետքարտուղար Ջոն Քերրիի այն հայտարարությունից, թե Բաշար Ասադը ճիշտ կաներ, եթե համաշխարհային ընկերակցությանը հաշիվ տար քիմիական զենքի պաշարների մասին: Մոսկվայում այդ ժամանակ բանակցում էին Ռուսաստանի եւ Սիրիայի արտգործնախարարները, որոնք դրականորեն արձագանքեցին Քերրիի ելույթին:

«Մենք պետքարտուղար Քերրիից լսեցինք, որ Սիրիան կարող է խուսափել հարվածից, եթե իր ամբողջ քիմիական զենքը հանձնի միջազգային ընկերակցության վերահսկողությանը: Սիրիայի ղեկավարությանը կոչ ենք անում պայմանավորվել ոչ միայն քիմիական զենքի պահպանման վայրերը միջազգային վերահսկողությանը հանձնելու, այլեւ այդ զենքի ոչնչացման պայմանագրին միանալու շուրջը», հայտարարեց ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը իր երկրի առաջարկությունը սիրիական կողմին փոխանցելուց հետո:

«Սիրիայի Արաբական Հանրապետությունը ողջունում է ռուսական նախաձեռնությունը, ելնելով մեր քաղաքացիների կյանքի եւ մեր երկրի անվտանգության նկատմամբ հոգածությունից», իր հերթին հայտարարեց Սիրիայի արտգործնախարար Վալիդ Մուալլիմը:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը նույնպես ողջունեց Մոսկվայի առաջարկությունը եւ հույս հայտնեց, որ միջազգային ընկերակցությունը արագորեն կձեռնարկի անհրաժեշտ գործողությունները, իսկ Սիրիայի քիմիական զենքը Դամասկոսի օգնությամբ կհաջողվի կամ ոչնչացնել, կամ էլ պահել հուսալի տեղում:

Ի դեպ, Դամասկոսի արեւելյան արվարձան Գուտայում օգոստոսի 21-ին քիմիական զենքի կիրառման վերաբերյալ ի հայտ են գալիս նոր վկայություններ: Սիրիացի գրոհայինների գերության մեջ 5 ամիս անցկացրած բելգիացի գիտնական Պիեռ Պիչչինի դա Պրատան երկուշաբթի օրն ազատ արձակվելուց հետո հայտարարեց, որ ինքը լսել է, թե ծայրահեղականներն ինչպես էին քննարկում Դամասկոսի մոտ քիմիական գրոհ ձեռնարկելու հարցը: Նրա խոսքերով, Սիրիայի իշխանությունները հաստատ կապ չունեն օգոստոսի 21-ի գրոհի հետ, որի համար Արեւմուտքն ամբաստանում է Բաշար Ասադին:

Մոսկվայի նախաձեռնությունից հետո նույնիսկ Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան սկսել են խոսել Սիրիայի հակամարտության քաղաքական լուծման մասին, նշում է ՌԻԱ գործակալությունը: Օբաման իր հերթին չի ուզում ռիսկի դիմել եւ առանց դաշնակիցների մասնակցության հարվածել Սիրիային: ԱՄՆ-ում CNN հեռուստաալիքի պատվերով անցկացված վերջին հանրային հարցման տվյալների համաձայն, ամերիկացիների 3/4-ը դեմ է հակասիրիական ռազմական գործողությանը: Ինչ վերաբերում է Սենատում «սահմանափակ» ռազմական գործողության բանաձեւի առթիվ սեպտեմբերի 11-ին նախատեսված քվեարկությանը, այն հետաձգվել է անորոշ ժամանակով:

Վեջին տեղեկությունների համաձայն, Ռուսաստանը, սիրիական կողմի հետ համաձայնեցնելով, մշակում է Սիրիայի քիմիական զենքը միջազգային վերահսկողությանը հանձնելու ծրագիր: BBC-ն մեջբերում է սեպտեմբերի 10-ին Սերգեյ Լավրովի արած այն հայտարարությունը, որ փաստաթուղթը «ամենամոտ ժամանակներս» կներկայացվի ՄԱԿ-ին: «Մենք պատրաստ ենք այն լրամշակել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի, Քիմիական զենքի արգելման կազմակերպության, ԱԽ անդամների մասնակցությամբ», ընդգծել է Լավրովը:

Նա ավելացրել է, որ ՄԱԿ-ի փորձագետները պետք է Սիրիա վերադառնան քիմիական գրոհի քննությունը շարունակելու համար:

**Պ. Ք.**

# Չինաստանը կբանտարկի համացանցում սուտ տարածողներին

Համացանցում սուտ տարածելու համար ՉԺՀ-ում այսուհետեւ կենթարկեն քրեական պատասխանատվության, կարող են դատապարտել մինչեւ 3 տարվա բանտարկության: Դա սպառնում է անհատական կայքէջ ունեցողներին, եթե զրպարտչական ճանաչված նրանց գրառումը դիտվի ավելի քան 5 հազար անգամ, եւ 500-ից ավելի օգտատերեր վերահասցեագրեն:

«Եթե ուզում եք, որ մարդը բանտարկվի, պարզապես համացանցում տարածեք նրա ոչ հավաստի գրառումը», նշում է South China Morning Post թերթը:

Սեպտեմբերի 10-ից ուժի մեջ մտած նոր օրենքում ասվում է, թե համացանցում ո՞ր գրառումները կհամարվեն այնքան անթույլատրելի, որ դրանց տարածման համար կայքատերը կազատազրկվի: Խոսքը վերաբերում է այն գրառումներին, որոնք կարող են առաջացնել հոգեբանական խանգարում, ինքնասպանության կամ ինքնավնասման կոչ են անում: «Լուրջ դեպքեր» են նաեւ բողոքի զանգվածային ելույթների, էթնիկական կամ կրոնական երկպառակության կոչերը, չին ժողովրդի նկարագրի նշավակումը:

ՉԺՀ գերագույն դատարանի ներկայացուցիչը հայտարարել է, որ «կիբեռտարածքը եւս հասարակական կյանքի մի մասն է», ուստի այստեղ եւս պատիժներ են պետք:

Չինական հիշյալ թերթի լրագրողները նշում են, որ նոր օրենքը որոշ ազատություն է տալիս իսկական անուններով հանդես եկող եւ պետական գործիչների սխալները մերկացնող բլոգերներին: Եթե ապացուցվի, որ պաշտոնյայի կաշառակերության մեղադրանքը հնարովի չէ, համացանցի օգտատերը կխուսափի քրեական պատժից:

ԼՈՒՐԵՐ

# «Կինոաշուն» ազգային կինոյի ամսվա մեկնարկ

Սեպտեմբերի 12-ին, ժամը՝ 20:30-ին Սիրահարների այգում կմեկնարկեն «Կինոաշուն» ազգային կինոյի ամիս ծրագրի բացօթյա կինոդիտումները: Այս անգամ կինոցուցադրումների համար առանձնացվել են տարբեր ժամանակներում նկարահանված ֆիլմեր՝ քաղաքային ռոմանտիկ սիրային պատմությունների մասին: Ցուցադրումները տեղի կունենան սեպտեմբերի 12-ին, 20-ին, 27-ին եւ հոկտեմբերի 4-ին, 11-ին, ժամը 20:30-ին: Նշենք, որ սեպտեմբերի 12-ի ծրագրում կներկայացվի սիրային կարճամետրաժ ֆիլմ՝ Առնոլդ Աղաբաբովի «Գառնի» ֆիլմը, որը սիրահարված զույգի բարդ հոգեբանակն հարաբերությունների մասին է, գլխավոր դերերում՝ Արմեն Ջիգարխանյանը (Ռուբեն), Էլվիրա Ուզունյանը (Լյուսյա): Կցուցադրվի նաեւ Դիանա Կարդումյանի «Դիալոգներ» ֆիլմը, ռոմանտիկ դրամա՝ սիրահար զույգի մասին: Երեւանը գեղեցկանում է, երբ նրա գիշերային գրկում կրկին հանդիպում է մի սիրահար զույգ: Ինչ կարող է փոխել նրանց կյանքում մի զով ամառային գիշերը, մի կարճ հանդիպումը, մի կիսատ զրույցը... Զրույցներ՝ ուրախ, հանդիմանող, տխրեցնող, հուշերով լի ու անբացատրելի մի դատարկություն, որ էլ չես լցնի ոչ մի խոսքով: Դերակատարներ Նարինե Գրիգորյան, Արմեն Մարգարյան:

Օրվա վերջին ֆիլմը Թամար Ստեփանյանի «Փետրվարի 19-ն» է: Կինոնկարը երկու երիտասարդների սիրային պատմության մասին է, զույգին մարմնավորում են դերասաններ Օֆելյա Զաքարյանը եւ Վախթանգ Հարությունյանը:

Ս. Հ.

# Մինաս Ավետիսյանի «Արմենիա» որմնանկարը պահպանման ու վերականգնման կարիք ունի



Վահրամաբերդ գյուղի մշակույթի տանը գտնվող Մինաս Ավետիսյանի «Արմենիա» որմնանկարը վերականգնման ու պահպանման կարիք ունի: Այս մասին «Արմենպրես»-ին տեղեկացրեց Մինասի որդին՝ Արման Ավետիսյանը՝ նշելով, որ չնայած պետական բյուջեով 2012 թվականին կառուցվեց մշակույթի տունը, իսկ որմնանկարը ոչնչացումից փրկելու համար մնաց կառույցի ներսում, սակայն որմնանկարը պետք է վերականգնել: «Ամենահրատապ վերականգնման խնդիր, Մինասի գործերից, այս պահին ունի «Արմենիան»: Շենքը սարքված է, բայց որմնանկարի պահպանման համար գումար նախատեսված չէ: Մինչ շենքի կառուցումը, տարիների ընթացքում, խոնավության պատճառով, որմնանկարը ներքեւի եւ վերեւի հատվածներում վնասվել էր: Վերջին մի քանի ամիսների ընթացքում որմնանկարը լրացուցիչ 30 տոկոսի կորուստ է ունեցել: Ի դեպ, շինարարության ընթացքում նույնպես նկարը վնասվել է: Սա Մինասի ամենաարժեքավոր որմնանկարն է»,- վստահեցրեց Արման Ավետիսյանը:

Որմնանկարը 1988 թվականի երկրաշարժից հետո մինչեւ անցած տարի գտնվել է բաց երկնքի տակ՝ փայտե պատնեշի մեջ: Որմնանկարը ոչնչացումից փրկելու նպատակով, ՀՀ կառավարության որոշմամբ եւ պետական միջոցներով կառուցվել է մշակույթի տուն՝ «Արմենիան» թողնելով կառույցի ներսում:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԽՈՅԱՆ

# Բորիս Բրովցինից մինչեւ Իզաբել Փաուստ Ա. Խաչատրյան համերգասրահում

Արամ Խաչատրյան համերգասրահում Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը Արամ Խաչատրյանի 110-ամյակին նվիրված Երեւանյան 7-րդ միջազգային երաժշտական փառատոնի շրջանակներում սեպտեմբերի 11-ին հանդես կգա Իզաբել Ֆաուստի հետ համատեղ համերգով, որի ընացքում կհնչեն Մոցարտի Ջութակի թիվ 1 եւ 4 կոնցերտները:

Իսկ ահա սեպտեմբերի 14-ին Նարեկ Հախնազարյանի եւ Բորիս Բրովցինի հետ համատեղ տեղի կունենա խաչատրյանական երաժշտության երեկո՝ կհնչեն Խաչատրյանի Կոնցերտ-ռապսոդիան՝ թավջութակի եւ նվագախմբի համար:

# Լեւոն Անանեան՝ անձնատուր մայր հողի կանչին

Մեզի համար անմաստելի խորհուրդ մը եղաւ Հայաստանի գրողներու միութեան նախագահ Լեւոն Անանեանի վաղաժամ մահուան գոյժը: Անհաւատալի՜ ու շանթահարի՜չ: Դեռ երէկ, այսինքն օգոստոսին, մարդկային իր մտածումներով ու ծրագիրներով մեզի հետ էր, մինչ՝ այսօր ու վաղը կը խօսինք իր «հանդերձեալ»ին մասին, հոգիին ու յիշատակին յաւերժաերթին մասին:

Հայրենի իրականութեան ծնունդն էր ան: Գրած, ստեղծագործած եւ աշխատած մի՛շտ հայրենի հողին վրայ: Գրական իր կեանքը սկիզբ էր առած բանաստեղծութեամբ, սակայն իր ողջ էութեամբ ան արձակագիր էր ու հրապարակագիր: Յանդուգն ու յախուռն էր հայեացքով ու կեցուածքով: Առաւել՝ տասնամեակ մը ամբողջ, երբ, 1990-ական թուականներուն «Գարուն» ամսագրի կեանքին վտանգ կը սպառնար, ինքն էր որ գերբնական ճիգերով կենդանի պահեց բոլորիս սիրելի «Գարուն»ը, կազմակերպչական իր ոգին սակայն, բարձրակէտ-նուաճումը արձանագրեց, երբ անցնող տասներկու տարիներու ընթացքին իրագործեց տասնեակ մը աւելի բազմաշերտ գրական համաժողովներու շարքեր:

Անհանդարտ ու փոթորկայոյզ իր հոգին, որուն արգասիքն էին բազմաբնոյթ գրական-մշակութային իր նախաձեռնութիւնները եւ անոնց իրագործումները կը մնան արձանագրուած երկրային մարդու տոմարի էջերուն: Երբ ամիս մը առաջ տակաւին Գրողներու միութեան նախագահի ծանր ու պատասխանատու նոր նստաշրջան մը կ՚ընդունէր իր ուսերուն... արդեօք կը զգա՞ր իր մարմինէն ներս յառաջացող քաղցկեղին նախանշանները: Մեծագո՜յն մարտահրաւէրը իր կեանքին սպառնացող: Կարմի՛ր գիծ մը՝ ասդենականի եւ անդենականի միջեւ:

Այս պահուն, երբ գրի կ՚առնեմ մտածումներս, հանգուցեալին հոգեհանգստեան յաւուր ժամերն են: Հրաժեշտի եւ յարգանքի վերջին առիթ մը՝ այցելուներու համար: Ճիշդ է, իր հոգին՝ այսինքն փոթորկոտ եւ անհանդարտ, խաղաղութիւն կը տենչար..., բայց ո՛չ այնպէս հապճեպօրէն պարտադրուած իր անձին, քանի որ յառաջիկայ քառամեայ պաշտօնավարութեանը ստացեր էր երաշխիքը կազմակերպչական նորանոր յղացքներու եւ ամբողջանուէր յանձնառութեան:



Ծառայութեան պատնէշի վրայ իր կեանքը զոհաբերող մարտիկը եղաւ Լեւոն Անանեան: Այժմ իր հոգիի խաղաղութիւնը կ՚ապրի ան: Հողեղէն իր գիտակցական կեանքի տարիներուն, անհաշիւ «մսխած» էր բնութեան իրեն պարգեւած քաջառողջ տարիները: Բազմահարիւր յօդուածներու եւ գրական ելոյթներու մարդն էր ան: Գրաւոր թէ բանաւոր:

Մեր գիրն ու մշակոյթը՝ հայ մարդու իր արժանապատուութիւնը կը համարէր:

Հայ գրողն ու հրապարակագիր՝ մշտարթուն խիղճը մեր ազգային լինելութեան անկշռելի մարտահրաւէրին:

«Տագնապներ» (Երեւան, 2004 թ.) եւ անոր յաջորդող «Դիմակայութիւն» (Երեւան, 2006 թ.) զոյգ հատորները եղան անուրանալի արժէքները իր քաղաքացիական արիութեան եւ յախուռն հրապարակախօսի առաքինութեան: Կը յիշեմ իր բանաձեւումը Սիլվա Կապուտիկեանի մասին, խորագրելով զայն «Ճշմարտութեան եւ արժանապատուութեան զանգահարը»: Իրն են տողերը ուղղուած Սիլվային, «իր ժողովրդի խղճի ու արժանապատուութեան մշտարթուն զանգահարն էր, նրա ճշմարտութեան անլռելի ձայնը: Մասամբ այրուեց նա՝ անմնացորդ ծառայելով այն «հանճարեղ հաւաքականութեանը», որ կոչւում է հայ ժողովուրդ եւ որի վիթխարի մշակոյթի տէրն ու մշակն էր համարում իրեն» («Դիմակայութիւն», էջ 162-163) տողեր, որոնք այժմ այնքան կը պատշաճին իր անձին, որ անժամանակօրէն անդարձ կը հեռանայ մեզմէ:

Լեւոն Անանեան «մարդ-գրող»ին ամբողջական հոգին բաշխուած է իր գիտակցական կեանքի 50 տարիներու փոթորկայոյզ ապրումներուն արձագանգող հրապարակագրութեան մէջ: Ապրումներ՝ որոնց մէջ սէրն ու վիշտը, խինդն ու ցասումը կը համալրեն զիրար, կ՚ամբողջացնեն մարդը՝ իր զգացումներով: Հայ մարդը՝ իր հայրենապաշտութեամբ:

Այս պահուն, «կարմիր գիծ»էն անդին կը գտնուի ան: Հոգեհանգիստի ու թաղման ծիսակատարութենէն ետք, դերերը փոխուած են կարծէք, եւ Լեւոն Անանեան իր երբեմնի գործակիցներուն, գործընկերներուն եւ ընթերցողներուն կը ներկայանայ իբրեւ ամբողջացած հայ գրագէտ մը: Իր «Ամբողջական երկեր»ով:

Հայրենանուէր հայ մարդու իր պատգամը միշտ գտնենք այդ մեծ մատեանի էջերուն շարահիւսուած տողատակի ճշմարտութիւններուն մէջ: Այն ատեն, Լեւոն Անանեան հողեղէն մարդու փոխարէն, մենք միշտ ողջունենք անոր բաշխած ոգեղէն պատգամները:

Բարի՛ յաւերժաերթ քեզի, սիրելի Լեւոն, եւ յաւե՛րժ լոյս ու խաղաղութիւն անհանդարտ հոգիիդ:

ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆ
Պէյրութ, 5 սեպտեմբեր 2013

# Ռուբեն Սեւակը «վերադարձավ» հայրենիք

1-ին էջից

«Այն այցելուների միջոցով վերածվելու է ղողանջող ահռելի զանգակատան, որի ձայնը լսելի պիտի լինի աշխարհում՝ նպաստելով Ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված ջանքերին: Թանգարանը դառնում է անցյալի, ներկայի եւ գալիքի մեջ անմահության ձայն, մահվանից վերածնվելու, նորից հառնելու եւ կյանքով հաղթելու ուղի: Այսօր մենք ոճրագործությանը պատասխանում ենք մեր ժողովրդի ազնիվ զավակի եւ նահատակի հիշատակը հավերժացնելով, կործանմանը պատասխանում ենք կառուցելով, ավերմանը՝ վերաշինությամբ, մահվանը՝ կյանքով: Չարին բարիով պատասխանելու քրիստոնեական այս ոգին դարձել է մեր ժողովրդի նկարագիրն ու էությունը, որը միշտ զորացնելու է մեզ՝ ապրելու եւ արարելու:



**Ալեքսանդր Թոփչյանը** «Եվ անգամ մահից հետո» վեպում նկարագրել է Ռուբեն Սեւակի կյանքը, ստեղծագործությունն ու նահատակությունը: Նրա բնորոշմամբ՝ Ռուբեն Սեւակը մեր այն նահատակ մտավորականներից է, որոնք մնացին անշիրիմ, եւ շնորհիվ թանգարանի Սեւակն իր տունն ունեցավ Հայաստանում:

«Սա նրա վերադարձի օրն է: Ռուբեն Սեւակը դեռեւս իր վաստակին, հերոսական կեցվածքին համարժեք ճանաչում չունի Հայաստանում: Նրա ճակատագիրն այդպես է դասավորվել: Թանգարանի բացումը կարեւորագույն հանգրվան է, որ այսուհետեւ ավելի կնպաստի նրան խորապես ճանաչելու եւ ուսումնասիրելու: Ռուբեն Սեւակը հնարավորություն ուներ իր կյանքը փրկելու, նրան առաջարկվեց դավանափոխ լինել եւ խուսափել նահատակվելուց, բայց նա, լիովին գիտակցաբար, գերադասեց կորցնել հոգին, քան փրկել մարմինը: Խորհրդանշական է, որ նրա վերջին հանգրվանը Մայր աթոռում է, չէ՞ որ նա հավատի համար նահատակվեց»:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր **Ռուբեն Միրզախանյանը** հավաստիացրեց, որ ժամանակի հետ Սեւակի թանգարանը կդառնա հանրության մշակութային եւ գիտական կենտրոններից մեկը:

# Նման պասիվ խաղով դժվար էր հաջողության հասնել

## *Հայաստանի հավաքականը Երեւանում 4-րդ անընդմեջ պարտությունը կրեց*



Չեխերի նկատմամբ տոնած հաղթանակը մեծ ոգեւորություն էր առաջացրել ֆուտբոլասերների շրջանում, որոնք հավաքականի հերթական հաջողությանն ականատես լինելու ակնկալիքով էին երեկ տեղ զբաղեցրել «Հրազդան» մարզադաշտի տրիբունաներում: Թեեւ հավաքականի կազմում առկա կորուստներին, սպասվում էր, որ մեր ֆուտբոլիստները հենց խաղասկզբից իրենց ակտիվ գործողություններով մրցակցի դարպասը գրավելու ուղիներ կփնտրեն, ինչպես դա արել էին երեւանյան նախորդ հանդիպումներում: Սակայն այս անգամ մեր հավաքականի կողմից նույնիսկ մեկնարկային պոռթկմանն ու ակտիվությանն ականատես չդարձանք:

Այնպիսի տպավորություն էր, կարծես այս խաղում Հայաստանի հավաքականին հաղթանակն անհրաժեշտ չէր, եւ մեր ֆուտբոլիստների գլխավոր խնդիրը սեփական դարպասն անառիկ պահելն էր: Այլապես ինչով բացատրել այն պասիվ խաղը, որ ցուցադրեցին մեր ֆուտբոլիստները դանիացիների հետ մրցավեճում` հանդիպման մեծ մասն անցկացնելով սեփական կիսադաշտում: Հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը նախընտրել էր խաղը կառուցել հակագրոհների վրա` հույս ունենալով նման խաղաոճով հասնել հաջողության: Սակայն դանիացիները մեր ֆուտբոլիստներին ազատ գործելու հնարավորությունից լրիվ զրկել էին` մամլիչ գործողություններ կիրառելով նրանց նկատմամբ: Այս ամենի արդյունքում առաջին խաղակեսում մեր ֆուտբոլիստներին այդպես էլ չհաջողվեց լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին: Առանց այն էլ փոքր ուժերով հակագրոհող մեր հավաքականի խաղն առջեւի գծում չստացվեց:

Հանդիպման առաջին խաղակեսը շատ նման էր 4 օր առաջ Պրահայում չեխերի հետ կայացած խաղին, միայն այն տարբերությամբ, որ Երեւանում մարզական բախտը մեզ չժպտաց:

Իսկ ահա դանիացիները հենց խաղասկզբից դիմեցին վճռորոշ գործողությունների` մեծ ուժերով գրոհելով Գեւորգ Կասպարովի պաշտպանած դարպասը: Գրեթե ողջ առաջին խաղակեսն անցավ հյուրերի խաղային եւ տարածքային առավելությամբ, որոնք մի քանի անգամ կարող էին գրավել Կասպարովի դարպասը: Բարեբախտաբար, այդ վտանգավոր պահերին հուսալի գործեց մեր դարպասապահը:

Թվում էր, թե ընդմիջումից հետո դաշտի տերերը կփոխեն մարտավարությունը եւ վերջապես կանցնեն հարձակողական ակտիվ գործողությունների: Սակայն երկրորդ խաղակեսն էլ կարծես առաջինի շարունակությունը լիներ, թեեւ մեր ֆուտբոլիստները որոշ չափով աշխուժացան: Գոլային առաջին իրական պահը ստեղծվեց 66-րդ րոպեին, անկյունայինի խաղարկումից հետո, երբ խառնաշփոթ իրավիճակում գնդակը քիչ էր մնացել հայտնվեր դանիացիների դարպասում: Խաղավերջում էլ հիշարժան էր այս խաղում իր գեղեցիկ հնարքներով աչքի ընկած, սակայն որոշ դրվագներում անհատական խաղով տարված Արաս Օզբիլիսի տուգանային հարվածը, որը հեռացրեց դարպասապահը:

Իսկ ահա դանիացիները, շարունակելով իրենց ակտիվ խաղը, ի վերջո հասան իրենց նպատակին: 73-րդ րոպեին սեփական տուգանային հրապարակում անզգույշ խաղաց խաղասկզբում դեղին քարտի արժանացած Վարազդաս Հարոյանը` գցելով մրցակցին: Այդ դրվագի համար մեր հավաքականը կրկնակի պատժվեց: Մրցավարը 11 մ հարված նշանակեց Կասպարովի դարպասին, եւ դաշտից հեռացրեց Հարոյանին: Դանիել Ագերը հստակ իրացրեց հարվածը` հաղթանակ պարգեւելով իր թիմին:

Այսպես Հայաստանի հավաքականն իր հերթական` արդեն 4-րդ անընդմեջ պարտությունը կրեց երեւանյան ընտրական մրցախաղում, որն, ի դեպ, հոբելյանական էր` 100-րդը, աշխարհի եւ Եվրոպայի ընտրական մրցաշարերում: Այս պարտությունից հետո Հայաստանի հավաքականն ընտրական մրցաշարում գործնականում կորցրեց երկրորդ տեղի համար պայքարը շարունակելու հնարավորությունը:

# Ընտրություններում Ստամբուլի պարտությունում թուրքերը մեղադրում են հայերին

Ինչպես հայտնի է, 2020-ի ամառային օլիմպիական խաղերի մայրաքաղաքի ընտրություններում Ստամբուլը պարտվել էր` համաշխարհային սպորտի ստուգատեսը կազմակերպելու իրավունքը զիջելով Տոկիոյին: Որքան էլ որ տարօրինակ է, այդ պարտությունում Թուրքիան սկսել է մեղադրել հայերին: Ըստ թուրքական Haberler.com-ի, թուրքական կողմը հայտարարել է, թե Բուենոս Այրեսում փակցված հակաթուրքական պաստառների հեղինակն Արգենտինայում հայկական լոբբիստական կազմակերպություններն են:

Արգենտինայի Հայերի երիտասարդական կազմակերպությունը բողոքի ակցիա էր կազմակերպել Բուենոս Այրեսում` ընդդեմ ՄՕԿ-ի նստաշրջանին ժամանած Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի: Ներկաները պարզել են Հայաստանի եւ Արցախի դրոշները, ինչպես նաեւ թուրք ազգայնականների կողմից սպանված Հրանտ Դինքի լուսանկարը: Բողոքի ակցիայի մասնակիցները բարձրացրել են տարբեր պաստառներ «Հեռացի՛ր, Էրդողան», «1 500 001-րդ զոհ Հրանտ Դինք», «Ցեղասպան թուրքական պետությունը սպանեց 1,5 մլն հայի, արդարություն ենք պահանջում», «Մարդու իրավունքները խախտող երկիրը չի կարող դառնալ օլիմպիական խաղերը հյուրընկալող երկիր» գրություններով:

# Կվիճարկեն շախմատային թագը

**Այսօր Թայչժոու քաղաքում մեկնարկում է շախմատի աշխարհի կանանց առաջնության եզրափակիչ մրցախաղը: Աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Աննա Ուշենինան իր տիտղոսը կփորձի պաշտպանել շախմատային թագի նախկին տեր, չինացի Հոու Յիֆանի հետ մրցախաղում: Կանցկացվի դասական շախմատի 10 պարտիա: Ոչ-ոքի արդյունքի դեպքում մրցակցուհիները հաղթողին կորոշեն լրացուցիչ մրցախաղում:**

# Հայաստանը 3 ներկայացուցիչ կունենա

**Սեպտեմբերի 12-ին Թուրքիայում մեկնարկում է մինչեւ 20 տարեկանների շախմատի աշխարհի առաջնությունը: Հայաստանն այդ մրցումներում կներկայացնեն Սամվել Տեր-Սահակյանը, Վահե Բաղդասարյանը եւ Մարիա Գեւորգյանը:**

ԸՄԲՇԱՄԱՐՏ

# Ըմբիշները 3 ոսկե մեդալ պարգեւեցին Հայաստանին



**Ֆրանսիական Նիցա քաղաքում ընթացող Ֆրանկոֆոնիայի միջազգային 7-րդ խաղերում հիանալի ելույթներ են ունենում հայ ըմբիշները, որոնք արդեն 3 ոսկե մեդալ են նվաճել:**

**Մինչեւ 55 կգ քաշային կարգում չեմպիոն հռչակվեց Օհան Գիֆինյանը, որը հաջորդաբար հաղթեց Մադագասկարի ներկայացուցիչ Բիենվենու Անդրիամալալային (4-0), լեհ Ադամ Բեյնկոզսկուն (4-0) եւ կանադացի Սթիվեն Տակահաշիին (3-1):**

**Հայաստանին 2-րդ ոսկե մեդալը պարգեւեց մինչեւ 66 կգ քաշային կարգում հանդես եկած Նարեկ Սիրունյանը: Նա պայքարից դուրս մղեց սենեգալցի Վիկտոր Դիատային (4-0), քաթարցի Աբդուֆրահման Իբրահիմին (5-0), կանադացի Գեդրիկ Հուդսոնին (5-0) եւ ռումինացի Ադրիան Մոյեսին (3-1):**

**Ազատոճային մեր 3-րդ ըմբիշն էլ` Վիկտոր Կազիշվիլին հաղթելով իր բոլոր մրցակիցներին, կանգնեց պատվո պատվանդանի վերին աստիճանին: Հիշեցնենք, որ Կազիշվիլին օգոստոսին Սոֆիայում կայացած ըմբշամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունում արծաթե մեդալ էր նվաճել:**

**Ֆրանկոֆոնիայի միջազգային մարզամշակութային խաղերն իրենց ընդգրկմամբ, նշանակությամբ աշխարհում 2-րդն են համարվում օլիմպիական խաղերից հետո եւ անցկացվում են օլիմպիադաներին նախորդող տարիներին:**

# Արոնյանը պարտությամբ մեկնարկեց

**Լեւոն Արոնյանն անհաջող մեկնարկեց ԱՄՆ-ի Սենթ Լուիս քաղաքում սկսված շախմատի մրցաշարում` սեւերով զիջելով ճապոնացի գրոսմայստեր Հիկարու Նակամուրային: Մրցաշարի մյուս պարտիայում Մագնուս Կառլսենը սպիտակներով հաղթեց Գատա Կամսկուն:**

**2-րդ տուրում ուշադրության կենտրոնում կլինի Արոնյանի եւ Կառլսենի մրցավեճը, որում հայ շախմատիստը կխաղա սպիտակներով:**

**Հիշեցնենք, որ 4 շախմատիստների մասնակցությամբ մրցաշարն անցկացվում է շրջանաձեւ մրցակարգով, 2 շրջանով: Հաղթողը կպարգեւատրվի 70  հազար դոլարով, 2-4-րդ տեղերը զբաղեցրածները կստանան համապատասխանաբար 50, 30 եւ 20 հազար դոլար:**

# Մրցաշարում երկիշխանություն է

**Շախմատի «Սեւանա լիճ-2013» մրցաշարի 2-րդ տուրից հետո Կարեն Գրիգորյանն ու Արման Փաշիկյանը 2-ական միավորով գլխավորում են աղյուսակը: Փաշիկյանը հաղթեց Մարկուս Ռագերին, Գրիգորյանն առավելության հասավ Յուրի Կուզուբովի նկատմամբ:**

**1,5 միավորով 3-րդ տեղում բելառուս գրոսմայստեր Սերգեյ Ժիգալկոն է, որը պարտության մատնեց Ավետիք Գրիգորյանին: Վերջինս 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց եւ միակն է, որ դեռեւս միավոր չի վաստակել: Դարիուշ Սվիերչի եւ Ռոբերտ Հովհաննիսյանի, Իվան Պոպովի ու Զավեն Անդրեասյանի մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի:**

# 13-ը երջանիկ թիվ է Նադալի համար



**Թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնության հաղթող դարձավ իսպանացի Ռաֆայել Նադալը` 3 ժամ 20 րոպեում հաղթելով սերբ Նովակ Ջոկովիչին (6-2, 3-6, 6-4, 6-1): Ռաֆայել Նադալը «Մեծ սաղավարտի» մրցաշարերում 13-րդ տիտղոսին արժանացավ: Իսկ Նովակ Ջոկովիչը 2-րդ տարին անընդմեջ չկարողացավ նվաճել գլխավոր մրցանակը: Հիշեցնենք, որ անցյալ տարի սերբ թենիսիստը եզրափակիչում պարտվել էր բրիտանացի Էնդի Մարեյին:**

**«Սա շատ էմոցիոնալ հաղթանակ էր: Գուցե միայն իմ թիմն է գիտակցում, թե ինչպիսի նշանակություն ուներ այս մրցախաղն ինձ համար: Նովակի դեմ խաղալն ինձ համար միշտ էլ առանձնահատուկ է եղել: Թերեւս նա միակն է, որը կարող է ինձ ստիպել խաղալ ուժերիս գերագույն լարումով», նշել է Ռաֆայել Նադալը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Հայաստանի ավետարանական ընտանիքի եկեղեցիների ծառայողական համաժողովի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

### *Ընդդեմ Հայաստանում այլասերվածությունների օրինականացման եւ հանուն քրիստոնեական արժեհամակարգի պաշտպանության*

Հայաստանի ավետարանական ընտանիքի եկեղեցիների ծառայողական համաժողովը՝

1. Լուրջ մտահոգություն է հայտնում, որ՝

ա. ««Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում (ներկայացված ՀՀ կառավարության կողմից՝ https://www.e-gov.am/ajax/gfn.php?f=ajv-34-05.doc) ընդհանրապես հանվել է գենդերի սահմանումը:

Դրանով իսկ տեղ է թողնվել հիշյալ օրենքի 4-րդ, 8-րդ, 18-րդ հոդվածներում ամրագրված միջազգային իրավունքի գերակայությանը, որի վտանգավորության մասին արդեն խոսվել է ս.թ. հուլիսի 22-ի Հայաստանի Ավետարանական Ընտանիքի Եկեղեցիների հովիվների հայտարարության մեջ:

բ. Այլասերվածությունները մեր հասարակական կյանքում ավերածություններ են անում՝ մտնելով հայ մշակույթ՝

- սեռական արատների մասին հեռուստատեսային «հումորային» հաղորդումների,
- արյունապղծություն եւ մանկապղծություն քարոզող «գրական» գործերի,
- հայկական կինոփառատոնի շրջանակում միասեռականություն քարոզող ֆիլմերի միջոցով (ի դեպ, դրանցից մեկը շարունակաբար ցուցադրվում է կինոթատրոններում):

գ. Սեպտեմբերի 14-21-ին «Գենդերային հեռանկարները Եվրոպայում» ծրագրի շրջանակներում եվրոպական մի շարք երկրներից Հայաստան են ժամանելու տարբեր երիտասարդական կազմակերպությունների փորձագետներ, որոնց նպատակն է «համախմբել տարբեր եվրոպական եւ հայկական կազմակերպությունների եւ նպաստել գենդերային հավասարության բնագավառում իրենց համագործակցության զարգացմանը»: Այն ֆինանսավորվում է «Եվրոպական միության եվրոպական հանձնաժողովի «Երիտասարդությունը շարժման մեջ» ծրագրի կողմից» (http://robbie-raul.blogspot.com/2013/08/hraparakam.html):

Ի դեպ, հիշյալ շարժման ծրագրային նպատակներից մեկը սեռական կողմնորոշման խտրականության կանխումն է (http://adukatar.net/wp-content/uploads/2009/12/Adu–8–Pages–11-14.pdf):

2. Հաստատելով, թե Նոր Կտակարանում համասեռամոլությունը դատապարտվում է որպես մեղք (Թուղթ հռոմեացիներին 1.24-27: Ա Տիմոթեոս 1.9,10: Ա թուղթ կորնթացիներին 6.9,10), մերժում է իրենց քրիստոնեական համարող «եկեղեցիների»՝ միասեռական «ամուսնությունները» ընդունելու դիրքորոշումը:

Մինչդեռ ճշմարիտ եկեղեցին այսօր էլ կոչված է մեղքի իշխանության տակ գտնվողներին բերել Քրիստոսին՝ ազատագրվելու, վերածնվելու եւ սրբացման կյանքով ապրելու (Ա թուղթ կորնթացիներին 6.11: Եփեսացիներին 2.1-6: 4.21-24: Կողոսացիներին 3.5-10):

3. Մի անգամ եւս դիմում է՝

ա. Մեր հավատավոր հայրենակիցներին՝ բարձրացնելու քաղաքակրթության փրկության եւ քրիստոնեական արժեհամակարգի ջատագովության դրոշը.

բ. Հայ հասարակայնության բոլոր խավերին՝ ըստ ամենայնի պաշտպանելու անցյալից ժառանգած մեր բարձրագույն արժեքները, միանալու այդ նպատակով նախաձեռնված ստորագրահավաքի շարժմանը.

գ. Հայրենի իշխանություններին՝ օրենսդրական եւ գործադիր ոլորտներում, ինչպես նաեւ միջազգային ինտեգրման գործընթացում, հավատարիմ մնալու մեր ավանդական-հոգեւոր արժեհամակարգին, Ազգային Ժողովում ընդունելու համասեռամոլության եւ մյուս այլասերվածությունների քարոզչության արգելման օրենք:

Մեր ժողովրդի հոգեւոր զարթոնքի եւ Հայաստան երկրի շինության համար առ Աստված աղոթքով եւ

Հայաստանի ավետարանական ընտանիքի եկեղեցիների ծառայողական համաժողովի անունից՝

***Վերապատվելի, դոկտ. Լեւոն Պարտագճյան***
***Եպիսկոպոս, վերապատվելի, դոկտ. Ռուբիկ Թումանյան***
***Վերապատվելի, դոկտ. Արթուր Սիմոնյան***
***Վերապատվելի, դոկտ. Ռաֆայել Գրիգորյան***
***Վերապատվելի Ռուբիկ Փահլեւանյան***
***Վերապատվելի, դոկտ. Սամվել Նավոյան***

***ՎԱՍՏԱԿ***

## Հիդրոերկրաբան Հովիկ Աղինյանը 75 տարեկան է

**Լրանում է հայ անվանի հիդրոերկրաբան Հովիկ Արտաշի Աղինյանի 75-ամյակը: Հովիկ Աղինյանը զբաղվել է հիմնականում ստորերկրյա ջրային ռեսուրսների եւ շահագործական պաշարների ուսումնասիրմամբ եւ գնահատմամբ՝ հետագայում դրանք ներկայացնելով պաշարների պետական հանձնաժողովների հաստատմանը: Նրա կողմից գնահատվել են բոլոր գետավազանների ստորերկրյա ջրերի բնական ռեսուրսները: Հատկանշական են նրա աշխատանքներն Ախուրյանի գետավազանում՝ մասնավորապես Շիրակի գոգավորության գրունտային ջրերի հաշվեկշռի ուսումնասիրության բնագավառում: Հազվադեպ են հիդրոերկրաբանական այն քարտեզները, որոնք չեն կազմվել Հ. Աղինյանի մասնակցությամբ:**

**Դեռեւս 1988թ ԱԱԱ-ի ստորերկրյա ջրերի պաշարները հաստատելուց 3-4 տարի անց Աղինյանն անհանգստանում էր, որ պաշարները հաշվարկվում են իրականից բարձր: Ժամանակին դրանք պայմանավորված էին Սեւանից ոռոգման նպատակներով մեծաքանակ ջրերի բացթողումներով, որոնց հաշվին ձեւավորվում էին նշանակալի քանակով ստորերկրյա ջրերի արհեստական ռեսուրսները: Հետագայում, կապված Սեւանից ջրերի բացթողումների դադարեցման հետ, բացահայտվեցին ստորերկրյա ջրերի արհեստականորեն ուռճացված ռեսուրսները, ինչպես նաեւ դրանց հիման վրա գնահատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները: Ու այնպես ստացվեց, որ միայն 30 տարի անց իրականացան նրա կանխատեսումները:**

**Մեծ է Հ. Աղինյանի ներդրումը ՀՀ աէկի ստորերկրյա ջրերի եւ շրջակա միջավայրի վրա փոխազդեցությունների գնահատման ասպարեզում: Աշխատանքների արդյունքում գնահատվել են աէկի հնարավոր ազդեցությունը ստորերկրյա ջրաղբյուրների եւ շրջակա միջավայրի վրա, որի արդյունքները հետագայում քննարկվել են ՀՀ կառավարությունում եւ այլ վերադաս մարմիններում՝ դառնալով ուղեցույց աէկի հետագա անվտանգ շահագործումն ապահովելու համար: Գիտնականը մեծ ներդրում ունի նաեւ սողանքային երեւույթների ուսումնասիրության բնագավառում:**



**Աղինյանի կատարած աշխատանքներն ամփոփվել են ավելի քան 40 աշխատություններում, հաշվետվություններում: Տարբեր գիտական ամսագրերում, հրատարակվել են ավելի քան 25 գիտական հոդվածներ:**

**Իր աշխատանքային գործունեության համար գիտնականն արժանացել է ՀՀ վարչապետի շնորհակալագրին: Նա արժանացել է նաեւ ՀՀ բնապահպանության նախարարության «Երկրաբանության բնագավառում նշանակալի ավանդի համար» գերատեսչական ոսկե մեդալի:**

**Հովիկ Աղինյանն առ այսօր աշխատում է ՀՀ բնապահպանության նախարարության «Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոնում: Նա ճանաչված եւ սիրված մասնագետ է ինչպես իր աշխատանքային կոլեկտիվում, այնպես էլ ջրային ռեսուրսներին առնչվող գիտահետազոտական եւ նախագծային շատ կազմակերպությունների աշխատակիցների շրջանում:**

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

**չեխական «Կարմա» գազի վառարան**

**Հեռ.՝ 094-48-68-03**

**Վաճառվում է**

Առանձնատուն Էրեբունի թաղամասում, Ռոստովյան փողոց, տուն 48: Ընդ. մակերեսը՝ 132 քմ, բնակելի մակերեսը՝ 86 քմ: Ունի 2 ճակատ 15 մ եւ 9,5 մ: Հարմար է բիզնեսի կազմակերպման համար: Մշտ. ջուր, գազ, ջեռուցում: Վերանորոգված է: Գինը՝ պայմանագրային:
Հեռ. 094-333-009:

**Վաճառվում է**

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 հ., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային:
Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730

www.azg.am

**ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են հետեւյալ լոտերը՝

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող՝

- ՀՀ, Կոտայքի մարզ, ք Եղվարդ հասցեյում գտնվող 0.541 հա մակերեսով վարելահող: Լոտի մեկնարկային գինը՝ 1765000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:
- ՀՀ, Կոտայքի մարզ, ք Եղվարդ, Հ. Շիրազ 10 փող., թիվ 51 հասցեյում գտնվող 0.08 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 3854000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:
- ՀՀ, ք. Երեւան, Պռոշյան փող., թիվ 40/5 հասցեյում գտնվող 35.2 ք.մ. մակերեսով բնակելի տուն, հողամաս՝ 0.00412 հա: Լոտի մեկնարկային գինը՝ 22940000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդը՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 (3-րդ հարկ) հասցեում 26.09.2013թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 04.11.2013թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, կամ բանկային հաշվին («Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում 2470103078480000 հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.akson.am կայքերը:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 10.9.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: